համայնքը նպատակաուղղված արդյունավետ քաղաքացիական մասնակցության համար ապահովում է անհրաժեշտ տեղեկատվական, խորհրդատվական հիմքեր, բայց շատ դեպքերում չի հանդիսանում մասնակցային գործընթացի կազմակերպիչ ու կառավարիչ: ՀԿ-ների կողմից հասարակությանը հուզող թեմաներին անդրադառնալը երբեմն ուղղորդվում է դրսից՝ մեր երկրի համար դրանից բխող անցանկալի հետևանքներով։ Այս տեսակետից կարծում ենք, որ պետական կառույցները պետք է ավելի ակտիվ աշխատեն կազմակերպված երիտասարդության ու նրանց կառույցների հետ, մշտապես լինելով նրանց հետ երկխոսության մեջ: Պետությունը ինքը պետք է դրամաշնորհներ տրամադրի այդ կառույցներին, պատվիրի նրանց որոշակի հիմնահարցերի շուրջ աշխատանքներ տանելու առումով, փորձելով նվազեցնել կազմակերպված երիտասարդության օգտագործման հնարավորությունը, դրսից ֆինանսավորող կառույցների կողմից:

Մյուս կողմից էլ ավելի սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս իսպառ վերցնել ՀԿ-ներին հատկացվող դրսի ֆինանսավորումը: Այս առումով հետաքրքրական է այն մարտավարությունը, որ որդեգրել են մի շարք ՀԿ-ներ։ Նրանք աշխատում են դոնորների պահանջները մոտեցնել մեր հասարակության հիմնախնդիրներին։ Նման ձևով աշխատանքների կազմակերպման արդյունավետությունն ավելի տեսանելի է հատկապես համայնքային զարգացման այնպիսի ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպիսիք են՝ ինտերնետ կապի ապահովումը, տարբեր կենցաղային խնդիրների լուծումը, սոցիալական օգնության տրամադրումը, անգլերենի ուսուցման դասընթացների կազմակերպումը, երիտասարդության շրջանում զբաղվածության ապահովումը, փոքր և միջին ձեռներեցության աջակցությունը և այլն: Այս ծրագրերի միջոցով լուծվում են պետության և հասարակության առջև ծառացած գերազանցապես սոցիալական բնույթի կարճաժամկետ խնդիրները: Ինչ վերաբերում է երկարաժամկետ խնդիրներին, ապա դրանց լուծմանն աջակցել հնարավոր է միայն համայնքների զարգացմանն ուղղված՝ պետության կողմից մշակված ռազմավարության համատեքստում իրականացվող ծրագրերի միջոցով [22]:

Ակտիվ երիտասարդությունը, բնականաբար, ունի որոշակի քաղաքական հայացքներ, որոնք միշտ չէ, որ համընկնում են պաշտոնական տեսակետներին, բայց դա չպետք է պատճառ դառնա, որ պետական կառույցներն իրենցից վանեն ակտիվ ու կազմակերպված երիտասարդությանը: Ընդհակառակը, պետական կառույցները իրենք պետք է նախաձեռնեն անխտիր բոլոր երիտասարդական կառույցների հետ երկխոսության գործընթացը, լսել նաև ընդդիմախոսների տեսակետները:

Այս առումով դրական օրինակ կարելի է համարել նաև այն, որ 50-ից ավելի ՀԿ-ներ միավորվել են համակարգող խորհրդում և սերտորեն համագործակցում են ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան կառույցների հետ՝ զինված ուժերում ոչ կանոնադրական փոխհարաբերու-

թյունների և այլ բացասական երևույթների կանխարգելման նպատակով: Եթե դա հնարավոր եղավ անել մեր երկրի անվտանգության այնպիսի կարևոր բնագավառում, ինչպիսին բանակաշինությունն է, ուրեմն, դա կարելի է անել նաև մյուս ոլորտներում:

Հայաստանի երիտասարդական դաշտում վաղուց օրախնդիր է դարձել ՀԿ-ների շրջանում կոալիցիաների ձևավորումը: Այս իմաստով ավելի արդյունավետ կարող են գործել բազմաճյուղ և բազմաոլորտ կոալիցիաները, որտեղ բացի ՀԿ-ներից, կարող են ներգրավվել քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ՝ ԶԼՄ-ներ, արհմիութենական կազմակերպություններ, ուսանողական միություններ և այլն, ինչը պետք է խրախուսվի ու քաջալերվի պետական կառույցների կողմից: Նման հետևողական քայլերի միջոցով միայն հնարավոր կլինի բարձրացնել երիտասարդության քաղաքական մասնակցության աստիճանը և օգտագործել կազմակերպված երիտասարդության ներուժը Հայաստանում քաղաքացիական հասարակության ուր քաղաքական համակարգի լիարժեք կայացման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մխիթարյան Ա.*, Կազմակերպված երիտասարդության դերը հասարակական նոր հարաբերությունների ձևավորման գործընթացում, «Նորավանք» ԳԿՀ, «Հայաստան-5», տեղեկագիր, Եր., 2005, էջ 23:
2. Տես «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 04.12 2001թ. http://www.arlis.am/
3. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, Եր., 2007, էջ 146:
4. Տես «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում. 2004 թվականի համեմատական հետազոտություն», Եր., 2004:
5. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 146:
6. Տես նույն տեղում, էջ 159:
7. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 153:
8. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 154:
9. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 155:
10. Նույն տեղում, էջ 152:
11. *Մխիթարյան Ա.*, Կազմակերպված երիտասարդության դերը հասարակական նոր հարաբերությունների ձևավորման գործընթացում, էջ 24:
12. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 159:
13. Տես http://hetq.am/arm/news/15611/depi-texut.html/
14. Տես http://dem.am/
15. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, Եր., 2007, էջ 146:
16. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, Եր., 2011, էջ 64:
17. *Վարդանյան Թ.*, ՀՀ հասարակական համակարգի հիմնախնդիրները արդի փուլում, «Նորավանք» ԳԿՀ, «Հայաստան – 1» տեղեկագիր, Եր., 2004, էջ 25:
18. *Վարդանյան Թ.*, ՀՀ երիտասարդական հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրները և առանձնահատկությունները, «Նորավանք» ԳԿՀ, «Հայաստան-5», տեղեկագիր, Եր., 2005, էջ 11:
19. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 154:

20. Նույն տեղում, էջ 160:
21. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, էջ 161:
22. *Վարդանյան Թ.,* ՀՀ երիտասարդական հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրները և առանձնահատկությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, «Հայաստան», № 1,Եր., 2005, էջ 12:

КЛАССИФИКАЦИЯ МОЛОДЕЖНЫХ ОРГАНИЗАЦИЙ АРМЕНИИ И ПРОБЛЕМЫ ПОЛИТИЧЕСКОГО УЧАСТИЯ

Р.А. Маргарян

АННОТАЦИЯ

Данная статья касается вовлечения молодежи в общественно-политических процессах в Армении. Рассматривается участие молодежи в формальных, неформальных и полуформальных молодежных организациях с юридической точки зрения. Анализируются сходства и различия каждой из групп.

Ключевые слова: молодежь, молодежная политика, молодежное гражданское участие, молодежные организации, неправительственные организации, Студенческий совет.

THE STRUCTURE AND CLASSIFICATION OF ISSUES OF POLITICAL PARTICIPATION OF ARMENAN YOUTH

H. Margaryan

SUMMARY

This article applies to youth involvement in Armenia's sociopolitical processes. Under consideration is the participation of youth in formal, semi-formal and informal youth organizations from legal point of view. Also, the similarities and differences of each of the groups are examined.

Keywords: youth, youth policy, youth civic participation, youth organizations, non-governmental organization, Student council.

Вестник РАУ № 1, 2016, 86–106

ФИЛОСОФИЯ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ա. Կ. Ղազարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում լուսաբանվում են եվրոպական պատմափիլիսոփայության զարգացման հիմնական միտումները՝ շեշտադրելով այն խնդիրները և նպատակները, որոնք յուրաքանչյուր պատմական շրջափուլում առաջադրում է եվրոպացու փիլիսոփայական-պատմական գիտակցությունը: Հոդվածում եվրոպական պատմական գիտակցության և պատմափիլիսոփայական խնդրակարգը տրամաբանական հերթականությամբ վերլուծվում է եվրոպական փիլիսոփայության պատմության հենքի վրա: Հեղինակը դիմում է եվրոպական փիլիսոփաների և մտածողների պատմափիլիսոփայական հայացքներին, որոնք թողել են նկատելի ազդեցություն եվրոպական պատմափիլիսոփայական մտքի զարգացման վրա և որոնք այսօր էլ խիստ արդիական են:

Հիմնաբառեր՝ եվրոպական պատմափիլիսոփայություն, դիցաբանական գիտակցություն, էմպիրիկ և փիլիսոփայական պատմություն, եվրոպական պատմափիլիսոփայական ավանդույթ, համաշխարհային պատմության գաղափար, եվրոպական պատմական գիտակցություն, հասարակական առաջընթացի գաղափար:

Եվրոպական պատմափիլիսոփայական ավանդույթը ձևավորվել է գերմանական, ֆրանսիական, անգլիական պատմական դպրոցների հենքի վրա: Եթե գերմանական դպրոցը հիմնականում կրում է կրոնական-խորհրդապաշտական բնույթ, ապա անգլոֆրանսիականը տեղադրվում է Լուսավորականության իդեալների և համընդհանուր ռացիոնալության սկզբունքի շրջանակներում: Պատմական զարգացման եվրոպական բոլոր տեսությունները աճեցին կա՛մ իբրև շեղում՝ հիմնականում գերմանական պատմական դպրոցից, կա՛մ նրա հետևորդները դարձան և զարգացրին պատմափիլիսոփայության առանցքային գաղափարները: Պատմափիլիսոփայության մեջ իսկայական ներդրում են կատարում Ջ.Վիկոն, Ի. Հերդերը, Գ. Հեգելը, Ի. Կանտը, Կ. Մարքսը, Օ. Կոնտը: Իսկ եվրոպական պատմական գիտակցության հիմնական ժամանակակից խնդիրները՝ հատկապես համաշխարհային պատմության նկատմամբ առավել հետաքրքիր պարզաբանումները, շարա-

դրեցին Է.Տրյոլչը, Ս.Տրուբեցկոյը, Օ.Շպենգլերը, Ա.Թոյնբին, Կ.Յասպերսը, Ռ.Կոլինգվուդը, Պ.Սորոկինը և Ն.Դանիլևսկին: Եվրոպական պատմափիլիսոփայական գիտակցության մեջ համաշխարհային պատմական գործընթացին տրվեց սկսվելու և ավարտվելու «հնարավորություն»՝ ի տարբերություն հելլենական գիտակցությանը հատուկ անվերջ շրջապտույտի գաղափարին:

«Պատմափիլիսոփայություն» հասկացությունը առաջինը օգտագործում է ֆրանսիացի լուսավորիչ Վոլտերը 1756թ., իսկ գերմանական մտածող Հերդերի աշխատություններում արդեն ձևակերպվում է պատմափիլիսոփայության խնդրակարգը: Հերդերը առաջադրեց համաշխարհային պատմական գործընթացի միասնականության գաղափարը՝ գործընթաց, որում ընդգրկված են բոլոր ժողովուրդները, և որը տանում է դեպի համամարդկային միասնական ապագա: Այս գաղափարը վերածվեց մշակութային-պատմական և բարոյական արժեքի ողջ մարդկության համար: Հետագայում եվրոպական պատմափիլիսոփայությունը համաշխարհային պատմությունը համարեց Եվրոպայի պատմությունը:

Տրյոլչը այսպիսի կերպափոխումը կոչում է եվրոպացու մեծամտություն կամ քրիստոնեական դոգմատիզմի նոր մոդիֆիկացիա՝ ընդհանուր ճակատագրի, բացարձակ ճշմարտության և փրկության մասին, որը վերաձևվել է՝ դառնալով բացարձակ բանականության և գիտության, մշակույթի և միակ ճշմարտության թագավորություն [1]: Համանման կարծիք է հայտնում նաև Ֆ.Դոստոևսկին: Եվրոպան եսասեր է և անտարբեր այլ մշակութային աշխարհների նկատմամբ, իրենք եվրոպացիներն էլ իրար այնքան լավ չեն հասկանում [2]: XIII դ. եվրոպացի տարեգիրը ոչ մի խոսք չի ասում չինացիների, արաբների և այլոց մասին, մինչդեռ գրում է համաշխարհային պատմություն: Թե՛ Հեգելը, թե՛ Մարքսը խոսում են համաշխարհային միասնական պատմության մասին, բայց ուշադրություն չեն դարձնում ո՛չ եվրոպական ժողովուրդներին և ո՛չ նրանց մշակույթներին, որոնք, նրանց կարծիքով, պատմության համար նշանակություն չեն ունեցել:

Ըստ եվրոպական պատմափիլիսոփայության դասական հեղինակների՝ միայն եվրոպացին է ձգտում ձեռք բերել գիտակցաբար պահպանված անցյալից գիտակցաբար կառուցված ապագա: Ուստի պատմության փիլիսոփայությունը պիտի սահմանափակվի միասնական պատմական գործընթացի մեջ թափանցելով՝ ելնելով այսօրվա եվրոպացու ապրումներից և համապատասխանելով նրա ապագայի կառուցմանը և ներկայի ստեղծագործական վերափոխումներին: Պատմափիլիսոփայական խնդիրները ծագել են եվրոպականության ձևավորման հետ և ավելի ու ավելի են հարստանում նրա էության բարդացման հետ: «Միայն եվրոպականության մեջ ենք հայտնաբերում (չնայած բազմաթիվ տարբերություններին) իմաստային միասնություն, երբ խոսքը գնում է պատմական կապերի և իմաստային ամբողջականության մասին, որը կազմում է մեր գոյության հիմքը» [3]:

Սակայն Արևմուտքի, Հեռավոր և Մերձավոր Արևելքի մշակութային

ավանդույթների միջև այնքան մեծ են տարբերությունները, որ միասնական մարդկության մասին դժվար է խոսել: Մարդկությունը չունի մշակութային միասնություն, հետևաբար չի կարող ունենալ միասնական պատմություն իր միասնական զարգացումով:

Եվրոպական պատմափիլիսոփայության մեջ մարդը իբրև պատմական սուբյեկտ հանդիսանում է համընդհանուր պատմական բովանդակության իրականացման միջոց. պատմափիլիսոփայությունը գծում է մարդ-պատմություն հարաբերության բոլոր սահմանները:

Պատմական գիտակցության առաջին աստիճանը դիցաբանությունն է: Առաջանալով նախնադարյան հասարակության մեջ՝ դիցաբանությունը հանդես է գալիս իբրև աշխարհընկալման, աշխարհակողմնորոշման առանձնահատուկ տեսակ՝ արտահայտելով մարդու ձգտումը՝ ըմբռնելու շրջապատող իրականությունը: Դիցաբանական աշխարհընկալումը բնութագրվում է առաջին հերթին փոխկապերի, փոխգործողությունների, փոխկապվածության հատկանիշներով: Նախնադարյան մարդը բնությունից դեռևս չի առանձնացվել: Բնականի և սոցիալականի, անհատականի և հասարակականի, հոգեկանի և ֆիզիկականի միջև սահմանները անորոշ են: Այսպիսի հարաբերական չտարաբաժանվածությունը ստացել է սինկրետիզմ անվանումը: Մարդու այսպիսի ներսուզումը բնական, հասարակական գործընթացի մեջ պայմանավորվել է վերացական պատկերացումների թույլ զարգացմամբ: Բայց դիցաբանական գիտակցությունը օժտված է որոշակի համակարգայնությամբ, կարգով: Մարդն իր դիցաբանական պատկերացումներում փորձում է վերաստեղծել այն տիեզերական ներդաշնակությունը, որ գոյություն ունի մարդու և բնության միջև, և իր հասարակությունը տեղավորում է այդ կարգավորված, հավերժական ընթացքի մեջ: Եվ հաճախ այդ բարձրագույն կարգի կենտրոնը դառնում է արարչագործության կենտրոն (սար, գետ, դաշտավայր): Սրբացված այդ վայրը հիմնականում կապվում է մարդու (ցեղի, հանրույթի) ծննդավայրի հետ: Տիեզերակառույցը հրաշալի մոդելավորվում է՝ դառնալով մեծ տիեզերական ներդաշնակության մանրակերտ, որն արտացոլվում է առասպելի մեջ, որտեղ վերակերպավորվում է գոյի անդրպատմական մոդելը իր հավերժական ճշմարտություններով, բարձրագույն տիեզերական ներդաշնակությամբ և կատարյալ տրամաբանությամբ: Առասպելը ժողովրդի հիշողության մեջ պահպանված պատումն է անցյալում կատարվածի մասին: Բացի առասպելներից, որոնք գտնվում են անհայտ հեռավորության վրա, տարբեր պատմական դարաշրջաններ հագեցված են առասպելաստեղծ տարրերով: Այսպիսի առասպելներով հարուստ են, հավանաբար, միջնադարի մասին պատմությունները. «առաջին Լեգենդները պետք է իրենց մեջ ամփոփեն քաղաքացիական ճշմարտություններ և դրա համար դրանք առաջին ժողովուրդների Պատմություններն են» [4]:

Առասպելում թաքնված է իր ներքին արժեքը, այն է՝ որոշակի խորհրդա-

նիշներ և ժողովրդի պատմական ճակատագրի մասին նկատառումներ: Պատմական ավանդապատումը ավելին է, քան սովորական պատմությունը, որովհետև այն իր մեջ պարունակում է տվյալ ժողովրդի պատմական ճակատագրի մասին այլաբանական իմաստներ, որոնք առաջնային նշանակություն ունեն պատմության փիլիսոփայական վերլուծության համար` բացահայտելու պատմական կյանքի ներքին իմաստը: Պատմական իրադարձությունից ավելի պատմության փիլիսոփայության համար նշանակություն է ձեռք բերում պատմության գաղտնի, ներքին կյանքը, պատմության «ներաշխարհը»:

Անտիկ փիլիսոփայական միտքը ընդունում է մարդկային գործունեության փոփոխականությունը, անհավասարաչափությունը, որը տեղի է ունենում իր էության մեջ անփոփոխ աշխարհում: Անտիկ միտքը չի դիտարկում տարբեր ժամանակների, դարաշրջանների, հանգամանքների, պատմական իրադարձությունների փոփոխությունները: Անտիկ փիլիսոփայության մեջ բացակայում է պատմական կյանքի համակարգայնացումը (կոնցեպտուալիզացիա): Անտիկ մտածողության մեջ պատմության հեղինակազոր (ավտարկիկ) իմաստը իր դասական արտահայտությունն է ստացել: Հին հունական մոտեցմամբ պատմությունը շարժվում է շրջանով` վերադառնալով իր ելման կետին: Պատմության ընթացքը ներառում է ծագում, ծաղկում, անկում: Յուրաքանչյուր պատմական գոյ իր ոչ մի դրվագում չունի պատմական այս կամ այն նպատակը: Ապագան պատահական է, և նա չի կարող ներկային տալ արժեք և իմաստ: Հաղթանակի ժամանակ անհրաժեշտ է մտածել ճակատագրի հարվածների մասին: Այս աշխարհընկալումը հատուկ է Տացիտոսին. «Որքան շատ եմ մտածում հին և նոր ժամանակների մասին, այնքան շատ է երևում ինձ բոլոր գործերի և իրադարձությունների, մարդկային բոլոր ձեռնարկների մեջ կուրություն և անհուսալիություն» [5]:

Հետաքրքիր է, որ հռոմեացիները և հույները իմաստավորում էին ոչ թե պատմությունը, այլ պատմությունները:

Ինչո՞վ է պայմանավորված, որ հույները չունեին «պատմականության զգացողություն»: Բերդյաևը բացատրում է այս հանգամանքը նրանով, որ հույները չունեին «ազատության զգացում» ո՛չ հունական կրոնում, ո՛չ փիլիսոփայության մեջ: Անտիկ հոգևոր աշխարհին հատուկ է հնազանդությունը ճակատագրին: Հելլենականությանը խորթ է պատմություն կերտող սուբյեկտը, առանց որի անհնարին է և՛ պատմությունը, և՛ նրա ընկալումը: Առանց գործող, պատմություն կերտող, ազատ մարդու անհնար է պատմության բացահայտումը: Հելլենական գիտակցությանը խորթ է պատմականությունը. ոչ մի հույն փիլիսոփա չի փորձում ըմբռնել պատմության իմաստը: «Հունական աշխարհընկալումը էսթետիկական է, նրանք աշխարհակառույցը ընդունում են ստատիկ, ներդաշնակ: Իսկ պատմությունը դա դրամա է, շարժում, ընթացք, որն ունի իր սկիզբը, ներքին զարգացումը և ուղղված է ապագային» [6]:

Անտիկ պատմափիլիսոփայության այն ձեռքբերումը, որն անցավ եվրոպական մտքին, պատմական իրողության տրամաբանական և ռացիոնալ հիմնարար կառուցվածքն է: Այն ապահովեց եվրոպական պատմափիլիսոփայության իմացաբանական բանականացումը: Սակայն եվրոպական մշակութային գիտակցության պատմականացումը տեղի ունեցավ նախ քրիստոնեության հաստատումով: Քրիստոնեական պատմագիտակցության համար ելակետային է Քրիստոսի հայտնվելը, որն անմիջապես բաժանում է ժամանակը երկու հիմնական շրջանի՝ նրանից առաջ և հետո: Քրիստոնեական հավատը հարաբերվում է Քրիստոսի հայտնվելու հետ հիշողության մոդուսում, քանի որ քրիստոնեության ողջ գոյությունը գոյություն չէ կոնկրետ միաժամանակյա կտրվածքում: Դա, նախ, ենթադրում է պատմական ժամանակի գիտակցում, այսինքն՝ պատմական ժամանակների միջև տարբերությունների գիտակցում:

Համաշխարհային պատմության առաջին համընդհանուր ժամանակագրությունը պատկանում է Եվսեբիոս Կեսարացուն (260/265թթ.–338/339թթ.), որը բաժանեց պատմությունը մինչև Քրիստոսի ծնունդը և Քրիստոսի ծնունդից հետո՝ ընդգծելով մարդկության պատմության առանցքային, գագաթնակետային պահը:

Հավատի վախճանաբանական ուղղվածությունը պատմականացնում է քրիստոնեական գիտակցությունը, շարադասում է ժամանակայնությունը, մարդկության պատմության իրադարձությունները՝ կյանք՝ արարչագործությունից հետո, պատմության ընթացքը՝ ներկայով դեպի ապագա, դեպի Աստծո թագավորություն: Միևնույն ժամանակ քրիստոնեությունը մտցնում է պատմության ընկալման նոր որակ՝ անհատական կյանքի պատմականություն, քանի որ յուրաքանչյուր մարդու գոյություն ներկայանում է իբրև անհատական պատմություն, պատմական հարաբերություն Աստծո և մարդկային հոգու միջև, Աստծո և իր ստեղծածի միջև: Քրիստոնեությունը ենթադրում է նաև մարդկային կյանքի անհատական պատմական իմաստավորում, ընդ որում մարդկային կյանքը ընդունվում է իր արժեքով՝ նշանակալից և իր բովանդակությամբ՝ յուրահատուկ:

Համաշխարհային պատմության հայեցակարգը, որը բացահայտվում է արարչագործության լույսի ներքո, իր հիմնական ուրվագծերով քրիստոնեական աստվածաբանության մեջ հայտնվել էր սկսած Օգոստինոսից: Նրա ուսմունքի մեջ պատմությունը միասնական է, և միասնական ճակատագիրը պայմանավորված է մեկ նախահորով՝ Ադամով: Նոր՝ անտիկից տարբեր, քրիստոնեական պատմության օբյեկտը դարձավ համաշխարհային ընտանիքը, նույն արյունից, հորից ստեղծված ողջ մարդկությունը: Մարդկության պատմության նպատակը դարձավ Աստծուն գտնելը: Մարդկային ցեղի դրաման դրամա է որոշակի սահմաններում, որն ունի իր սկիզբը և կունենա իր վերջը: Պատմությունը ունի գծային սխեմա: Առանց պատմության վերջի հեռանկարի՝ ընկալելի չէ պատմական զարգացումը: Առանց վախճանաբա-

նության պատմությունը չի ունենում իր ներքին պլանը:

Դիմելով հռոմեական պատմությանը՝ Օգոստինոսը պարզաբանում է Հռոմի անկման պատճառները, դրանով իսկ տալով հին պատմության առաջին իմաստատեսական ակնարկը: Օգոստինոսի մոտ պատմության նպատակը բարոյական-գաղափարական է: Պատմությունը ձեռք է բերում բարոյական աստիճանական զարգացման բնույթ [7]:

Միջնադարյան աստվածաբանությունը ոչ մի քայլ չկատարեց այդ ուղղությամբ: Քրիստոնեական պատմության օբյեկտը դարձավ համաշխարհային ընտանիքը, և այդ երևույթի համար իրական հիմքեր էր ստեղծել Հռոմեական կայսրությունը: Պատմիչները սկսեցին հյուսել այդ ժողովուրդների պատմությունը համընդհանուր պատմական կառույցի մեջ: Հեթանոս պատմիչների պատմությունները (Հին Կտակարան) միավորելով մեկ ընդհանուր պատմական հյուսվածքի մեջ՝ Կեսարացին ամբողջացրեց համաշխարհային պատմությունը Ադամից մինչև 330թ., ընդ որում Կեսարացին սահմանել էր քրիստոնեական պատմության շրջանակները, իսկ փիլիսոփայական ոգին ներարկում է Օգոստինոսը: Օգոստինոսի ստեղծագործություններում արտացոլվում է քրիստոնեության հաղթանակը, եկեղեցու համաշխարհային նշանակությունը: Եվրոպական պատմափիլիսոփայության մեջ պահպանվում են հենց Օգոստինոսի դրույթները:

Վերածնունդը աշխարհակառույցի կենտրոնում տեղավորեց մարդուն՝ առաջ քաշելով ինքնուրույն, ինքնաբավ մարդու հայեցակարգը՝ հաղթահարելով միջնադարյան աշխարհընկալումը: Եկեղեցու հեղինակության անկման հետևանքով աճեցին անհատապաշտությունն ու սուբյեկտիվիզմը: Վերածննդի պատմական գիտակցության մեջ տեղի ունեցող արմատական փոփոխությունները լավագույնս արտահայտվել են Մաքիավելու ուսմունքում: Պատմության մեջ Մաքիավելին առաջընթաց չի տեսնում: Հնագույն ազգերի մոտ նա դիտարկում է ավելի մեծ սեր դեպի ազատությունը, քան նոր ազգերի մոտ և շատ ավելի հզոր դաստիարակության համակարգ: Մաքիավելին պատմության պատճառները փնտրում է մարդկային հատկանիշների և քաղաքական հաստատությունների մեջ: Մարդիկ երբեք չեն գործում բարոյականությամբ, միայն՝ ըստ անհրաժեշտության [8]:

Եթե Մաքիավելին կրոնին վերաբերվում էր իբրև քաղաքական միջոցի, ապա Բոդենը խոսում է նրա բարձր նշանակության մասին և քարոզում կրոնահանդուրժողականություն: Ըստ նրա՝ պատմությունը կենդանություն է տալիս փիլիսոփայությանը, իսկ պատմության ուսումնասիրության մեթոդի ձևակերպումը Բոդենը համարում է փիլիսոփայության գործառույթ: Նա պատմությունը բաժանում է երեք բնագավառների՝ աստվածային (եկեղեցական), բնական և մարդկային: Պատմաբանը պարտավոր է այս երեք մակարդակները ընդգրկել և պարզաբանել մարդկային պատմության հարաբերությունը աստվածայինի հետ: Բոդենը առաջընթացի գաղափարի առաջին քարոզիչն է: Նա հրաժարվում է պատմության շրջանաձև զարգա-

ցումից և շեշտը դնում է առաջընթաց շարժման վրա: Նա դեմ է այն մտքին, որ մարդկությունը ունեցել է իր ոսկե դարը, հետո ետընթաց է գրանցել: Բոդենը այս առումով հանդիսանում է Բեկոնի «Գիտությունների արժանապատվության և բազմապատկման մասին» գործի նախակարապետը: Բոդենի իրական ժառանգորդը Մոնտեսքյոն է, որը զարգացնում է Բոդենի տեսությունը՝ կլիմայի ազդեցությունը ժողովուրդների բարքերի և բնույթի վրա:

Բեկոնը մարդու կողմից բնությունը հաղթահարելու փառավոր ճանապարհը համարում է հայտնագործությունները և սրանով եվրոպական պատմափիլիսոփայության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում: Նա ընդունում է անվերջ առաջընթացի գաղափարը: Նախորդ դարաշրջանների «գիտական մոլորությունները» Բեկոնը համարում է ոչ ճիշտ մեթոդաբանության արդյունք: Առաջընթացին խանգարում են ոչ թե գաղափարները, այլ՝ բնության ուսումնասիրության սխալ մեթոդը: Մեծ դժվարություններ է հարուցում մտովի տեղափոխվել անցած դարաշրջաններ, ըմբռնել մարդկանց մտադրությունները, գտնել գործողությունների ներքին տրամաբանությունը: Պատմության օգուտը Բեկոնը տեսնում է ոչ միայն գիտության փառավոր ընթացքը հաստատելու մեջ, այլ, որ ավելի կարևոր է՝ նպաստելու գիտությունների հաջողություններին, գտնելու անհաջողությունների և արժանիքների պատճառները, որից էլ դուրս բերել լավագույն մեթոդները: «Քանի որ գործում է թյուր և կանգնում անհաջողության առաջ նա, ով չի հենվում անցյալի հիշողության և օրինակների վրա» [9]:

Պատմությունը պահպանում է նախնիների քաջագործությունների հիշատակները, քաղաքացիական իմաստությունը: Բարդությունը կայանում է նրանում, որ հնագույն պատմությունները ունեն մի շարք թերություններ. ոմանք պատմում են աղքատ բովանդակությամբ, ոմանք հյուսում են իրականը ցանկալիի հետ, շեշտում անկարևորները, ոմանք շատ են ստեղծագործում, և խիստ զգացվում է կուսակցականության դրոշմը, ոմանք պատմությանը քաղաքականություն են խառնում: Բեկոնը պատմությունը բաժանում է երկու տեսակի՝ մաքուր և խառն: Խառը այն պատմությունն է, երբ պատմաբանը պատմությանը խառնում է քաղաքականություն, բնագիտություն և այլն: Մաքուր պատմության մեջ պատմական պատումը կատարվում է ընտրողությամբ՝ պատմագրի իր առաջ դրած խնդիրներին համապատասխան՝ նպատակ ունենալով խորհել քաղաքականության այս կամ այն խնդիրների շուրջ: Բայց Բեկոնը մերժում է այն պատմաբաններին, որոնք պատմության մեջ ամեն տեղ քաղաքականություն են մտցնում: Պատմությունը բաժանվում է երկու բաժնի՝ բնական և քաղաքացիական, վերջինս իր հերթին բաժանվում է եկեղեցականի, գրականի, քաղաքացիականի (բուն իմաստով): Գոյություն ունի միայն եկեղեցական և քաղաքացիական պատմություն, իսկ գրականության պատմությունը պիտի կառուցվի: Այս խնդիրը առաջ քաշելով՝ Բեկոնը նպաստում է գրականության պատմության ստեղծմանը, ինչը, ըստ էության, կապահովի տվյալ ժամանակաշրջա-

նի համարժեք ըմբռնումը, որովհետև կբացահայտի ժամանակաշրջանի հոգին և նրա պատմությունը [10]:

Նոր ժամանակի մտածողները հատուկ չեն անդրադառնում պատմափիլիսոփայական խնդրակարգին: Այդ ժամանակաշրջանի պատմականացումը պայմանավորված է լուսավորականության գաղափարաբանությամբ, ըստ որի պատմությունն ունի նպատակային ուղղվածություն և այն առաջընթաց շարժում է բանականության զարգացումով: Լուսավորական մտածողությունը դիմում է պատմությանը հիմնականում ապագայի մոդուսում, ներկան չի կապվում անցյալի հետ ժառանգորդումով, օրգանապես չի աճում անցյալից և անցյալը հանդես չի գալիս ներկայի նկատմամբ՝ իբրև պայմանավորող աստիճան: Սակայն լուսավորական դարաշրջանում հայտնվում են նաև այնպիսի մտածողներ, որոնք պատմության նկատմամբ դրսևորում են պատմական վերաբերմունք: Օրինակ՝ Վիկոն և Հերդերը պատմական կյանքի նշանակությունը տեսնում են հատկապես անցյալում, ընդ որում ոչ թե ինքնին, այլ՝ ներկայի և ապագայի նկատմամբ:

Վիկոն քննադատում է Դեկարտին, որ գիտությունը հանգեցրել է մաթեմատիկային, ֆիզիկային և մետաֆիզիկային: Նա ժխտում է հռոմեական իրավունքի հունական ծագումը, քանի որ նոր ժամանակի պատմական դպրոցը համարում է, որ իրավունքը և օրենսդրությունը հանդիսանում են ժողովրդի ոգու արտահայտությունը: Իրավունքը, լեզուն և դիցաբանությունը Վիկոն համարում է հռոմեական իմաստության արդյունք: Այսպիսով Վիկոն պատմությունը հարստացրեց նոր գործիչով՝ ժողովրդով: Հռոմեական ժողովուրդը դարձավ, ըստ Վիկոյի, պատմական ժողովուրդ: «Մենք բացահայտեցինք ոչ թե հույների և հռոմեացիների մասնավոր պատմությունը, այլ հավիտենական օրենքների պատմությունը, որ կառավարում է բոլոր ազգերին, իրենց աճի, հասունության կամ անկման ժամանակ» [11]: Հարկ է նշել, որ պատմության ելակետը համաշխարհային ջրհեղեղն է: Վիկոյի պատմափիլիսոփայությունը հանդիսանում է կապող օղակ այն պատմաբանների համար, որոնք իրադարձությունների մեջ նույնպես փնտրում են Աստծո միջամտությունը: Վիկոն նաև հիմք դրեց պատմական քննադատությանը:

Հերդերի երկու գաղափար պիտի մեծ ազդեցություն ունենար եվրոպական պատմափիլիսոփայության կայացման վրա՝ հավատը մարդկության առաջընթացի նկատմամբ, հավատը մարդու և մարդկության նկատմամբ: Արարչի նկատմամբ հավատը Հերդերի ղեկավար գիծն է, որի միջոցով նա փորձում է մտնել մարդկության պատմության լաբիրինթոսը, սակայն առանձին պատմական իրադարձություններ չի բացատրում նախախնամության կամքով և ոչ մի միստիկ տարր չի մցնում: «Պատմության շարադրանքի մեջ անհրաժեշտ է հնարավորինս մոտենալ ճշմարտությանը և բացատրությունների և ընկալման մեջ անհրաժեշտ է գտնել երևույթների լիակատար կապերը և չբացահայտել երևույթը մեկ այլ անհայտով» [12]: Հերդերը մշակեց հումանիզմի նոր տեսլական. բոլոր ժողովուրդներին և բոլոր դարա-

շրջանների տրված է զարգացման հավասար հնարավորություններ. և՛ մարդու, և՛ պատմության նպատակը մեկն է՝ հասնել բարձրագույն զարգացման և երջանկության: Նրա գործը՝ «Գաղափարներ մարդկության պատմության փիլիսոփայության շուրջ», առաջին փորձն է մարդկության պատմությունը ուսումնասիրելու որպես բնապատմական ընթացք: Իր կենսաբանական նյութի մեջ Հերդերին հետաքրքրում է մարդու տեղը օրգանական աշխարհում, նրա հարազատությունը և օտարությունը այլ կենսաբանական տեսակների հետ: Այդ կապակցությամբ Հերդերը առաջարկում է երկու հիմնական օրենք.

1. կենդանի էակների դասերը շատանում են այնքան, որքան հեռանում են մարդուց և որքան մոտ են մարդուն, այնքան փոքրաքանակ են դառնում կատարելագործված տեսակները,

2. որքան մարդուն մոտ, այնքան մեծանում է հիմնական կառուցվածքի նմանությունը մարդու հետ: Բնությունը իր անսահման բազմազանության մեջ ողջ կենդանական աշխարհը ստեղծել է մեկ հիմնական կառուցվածքով:

Նրա համար բնության ուսումնասիրությունը տանում է ոչ թե անհավատության, այլ բերում է հավատին: Եվ եթե Աստված բնության մեջ է, նա նաև պատմության մեջ է: Ամենավայրի ընթացքի մեջ պատմությունը ևս, ինչպես բնությունը, ենթարկվում է օրենքների: Նա Լայբնիցի մոնադաբանության ազդեցության ներքո, անընդհատ զարգացման տեսության ազդեցության տակ բնությունը պատկերեց իբրև ցածրագույն ձևերից բարձրագույնին անցնելու անընդհատ շարժում: Հերդերը բնություն ներմուծեց պատմականության սկզբունքը, և ավարտված աշխարհակառույցը վերածվեց հավերժ ստեղծագործական գործընթացի: Աշխարհը նրա համար է լավը, որ անընդհատ ձգտում է լավանալու: Լավատեսությունը պատմության ելակետը չէ, այլ՝ նրա պսակը: Ժողովուրդների բնավորությունը Հերդերը պայմանավորում է կլիմայի ազդեցությամբ: Ըստ նրա՝ պատմափիլիսոփայության նշանակությունը կայանում է մեծագույն փորձի մեջ՝ հասկանալու պատմության օրենքները և նպատակը: Նա պատմության օրենքները դիտարկում է տիեզերակառույցի համակարգում: Հերդերը փորձ է անում պատմության ուսումնասիրությունը դնել խիստ գիտական հիմքի վրա: Մարդկության պատմությունը մտածողը համարում է պարզ, բնապատմական գործընթաց: Ինչպես սերմից ծլարձակում է ծառը, այնպես էլ անպայմանորեն ժողովուրդները գնում են զարգացման ուղիով: Մեծ հումանիստը պատմության նպատակը համարում է մարդասիրությունը: Այս սկզբունքի հետ շաղկապված է «Մարդկության պատմությունը դաստիարակության պատմությունն է» Հերդերի գաղափարադրույթը [13]: Առաջընթացը հնարավոր է միայն ներսից՝ իբրև գիտակցական ակտ: Պատմական մարդը ունի կրկնակի ծագում. նա բնության որդին է, ինչպես նաև հոգևոր դաստիարակության արդյունք: Այսպիսով, մշակութային ժառանգորդումը հնարավոր է դարձնում պատմությունը, որովհետև մեկ հոգևոր ամբողջի մեջ միավորում

է մարդկային բոլոր սերունդները: Ժառանգորդումը մշակույթի մեջ նույնն է, ինչը էներգիայի պահպանման օրենքը ֆիզիկական աշխարհում: Այս ճանապարհով Հերդերը լուծում է անհատական բարիքի և ընդհանուր նպատակի առկա հակադրությունը: Այս հիմքով էլ նա լուծում է մեկ այլ հակադրություն, այն է՝ ազգայինի և համամարդկայինի միջև: Ժողովուրդը, որը գնահատում է իր ինքնությունը, գիտակցում է, որ գոյություն ունի համընդհանուր իդեալ, որը փորձում է իրականացնել ազգային ձևի մեջ: Եթե ժողովուրդը ունի մշակութային մակարդակ և ըմբռնում է պատմության իմաստը, ապա իր մշակույթով տվյալ ազգը պարտական է նախորդ սերունդներին և ժողովուրդներին: Առաջընթացը մշակույթում իրականանալի է միայն մյուս ժողովուրդների հետ փոխգործունեության և համերաշխության շնորհիվ, պատմությունը այդ ազգի առաջ (ինչպես նաև մյուսների) դրել է նույն նպատակը՝ մարդկայնության զարգացումը, և դա պետք է ազգային կեցությամբ արտահայտվի: Ոչ մի ազգություն չի կարող պարծենալ, որ ինքը հասել է կատարյալ մարդասիրության դրսևորմանը:

Հերդերը մերժում է աշխարհաքաղաքացիությունը և այդ պատճառով պահանջում է Գերմանիայում ազգային պատմության մշակում իրականացնել: Ազգերը, յուրացնելով իրենց բնական տարածքները, այնպես են կապվում շրջապատող բնությանը, որ նրանց մեջ արթնանում է հայրենիքի զգացողությունը: «Վերցրեք նրանցից հողը և դուք կվերցնեք ամեն ինչ» [14]: Հերդերը մշակույթը և լուսավորությունը դիտում է որպես համարժեք հասկացություններ: Նա մշակույթ է համարում մարդկության կողմից ստեղծվածի օգտագործումը և դրա միջոցով դաստիարակության գործընթացի իրականացումը: Նման մոտեցումը վերաբերում է հատկապես Եվրոպային, քանի որ Եվրոպան կրթվեց անտիկ (հունահռոմեական) մշակույթի օրինակով: Նրա մշակութային պարտեզը պարարտ հող ուներ: Այս կողմնորոշման մեջ դիտարկվում է ողջ եվրոպական պատմափիլիսոփայության խոստովանությունը: Դրա հետ մեկտեղ Հերդերը մարդկությունը դիտում է իբրև բարդ օրգանիզմ, որի մեջ յուրաքանչյուր մասնիկ ունի իր ապրելու և գործելու իրավունքը և իր ներդրումը: Հերդերը դեմ է եվրոպակենտրոնությանը: Նրա կարծիքով մշակույթը չի չափվում միայն տեխնիկական առաջադիմությամբ: Մշակույթի ուժն ու գեղեցկությունը իր ներքին հարստության մեջ է: Մարդասիրությունը պատմության առանցքն է և առաջ մղող ուժը:

Բոլորովին այլ տեսակետ ուներ Կանտը հատկապես առաջընթացի աղբյուրին և նպատակին անդրադառնալիս: Հերդերը էվոլյուցիայի մեջ չի նկատում ոչ մի ընդմիջում՝ մի աստիճանը սահուն անցնում է մյուսին, իսկ բանականությունը ֆիզիկական կառուցվածքի ծնունդն է և հայտնվում է աննկատ: Անպայման հրամայականի հեղինակը՝ Կանտը, չի կարող դրա հետ համաձայնել: Նրա համար բանականությունը ինքնուրույն համաշխարհային մեծագույն սկիզբ է. նա ֆիզիկական աշխարհի ծառան չէ, այլ՝ տիրակալը, և նրա դերը պատմության մեջ ստեղծագործական է: Մարդկության

դերը աշխարհում բացահայտելու համար անհրաժեշտ է սկսել ոչ թե ֆիզիկական պայմանների ուսումնասիրությունից, այլ մարդու էությունից՝ սկսելով նրա բանականությունից: Կանտը չի ուսումնասիրում մոլորակի ֆիզիկական պատմությունը. նա սահմանափակվում է այն ոլորտով, որտեղ գործում է բանականությունը՝ պետություն և իրավական հարաբերություններ: Մարդկային գործողությունների տեսարանի մեջ չի կարողանում հայտնաբերել դրանք կարգավորող որոշակի պլան, ուստի Կանտը փորձում է գտնել ղեկավար գիծ պատմության մեջ, որը թելադրված էր բնության կողմից, ինչպես որ Կեպլերը կամ Նյուտոնը փորձեցին վերհանել բնության համընդհանուր օրենքները: 1784թ.-ին նա գրում է «Համընդհանուր պատմության գաղափարը համաշխարհային-քաղաքացիական պլանում» աշխատությունը: Կանտը հանգում է այն մտքին, որ «Մարդու բնական ունակությունները (որպես աշխարհում միակ բանական էակի)՝ ուղղված նրա բանականության կիրառմանը, լիարժեք զարգանում են ոչ թե անհատի, այլ ցեղի մեջ» [15]:

Ըստ Կանտի՝ բնությունը՝ իբրև մարդկային ունակությունների բացահայտման և զարգացման միջոց, օգտագործում է մարդկանց անլուծելի հակասությունը: Փորձելով իշխանություն ձեռք բերել մյուսների նկատմամբ և նաև տարբերվել, վեր բարձրանալ՝ մարդը սկսում է զարգանալ, բարբարոսությունից անցնելով մշակույթի: Մարդն անում է իր հասարակական կազմակերպման առաջին քայլերը: Մարդկության մեծագույն խնդիրն է հաստատել համընդհանուր քաղաքացիական հասարակություն: Բոլոր պատերազմները փորձեր են (բնության մտահղացմամբ) հասնել լավագույն քաղաքացիական կարգի: Ուստի պետություններն արդեն այսօր չեն կարող հեռանալ իրենց սեփական մշակույթից, եթե չեն ուզում մյուսներից ետ մնալ: Հաջողված պետական կառույցները բարձրացնում և հռչակավոր են դարձնում ժողովուրդներին, իսկ սխալները կործանում են նրանց: Կանտը հարց է բարձրացնում՝ մարդկությունը գտնվու՞մ է անընդհատ առաջընթացի ճանապարհին, հնարավոր է պատմությունը a priori: Նա համարում է, որ՝ այո: Կանտի մեծագույն ծառայությունն այն է, որ նա մատնանշեց այն նպատակը, որին ձգտում է մարդկության պատմական առաջընթացը, և որ այդ նպատակը միևնույն ժամանակ և մարդկության իդեալն է: Եթե Հերդերի համար դա մարդասիրությունն է, ապա Կանտի համար բարձրագույն քաղաքացիական կառույցն է՝ իրավունքի լիարժեք իրականացումը, որը կապահովի համաշխարհային խաղաղություն: Կանտը փորձեց սահման դնել էմպիրիկ իմացության, երևույթների և զգայականորեն ընկալելի և մտահասանելի աշխարհների միջև և դրանով առաջացրեց մեծ հետաքրքրություն առարկաների և երևույթների էության մեջ թափանցելու համար:

Շելլինգը «Անդրանցական իդեալիզմի համակարգում» աշխատության մեջ վերադարձավ պատմականության խնդրին՝ պատրաստեց հեղաշրջում փիլիսոփայության մեջ, որը ծնեց Հեգելին: Շելլինգը առաջ քաշեց բացարձա-

կի հասկացությունը: Նրա ընկալմամբ ինչպես բնությունը, այնպես էլ մարդկային ոգու պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բացարձակ ոգու հայտնություն, որը բացահայտվում է աստիճանաբար զարգացման միջոցով: Պատմական իրադարձությունները տարբեր երևույթներ են, որոնցում հայտնաբերվում է բացարձակ բանականությունը: Իբրև ուսմունք բացարձակի մասին՝ փիլիսոփայությունը Շելլինգի համար բաժանվում է երեք ոլորտի՝ աստվածային, բնական (բնություն) և մարդկության պատմություն, որն էլ իր հերթին ենթադրում է կրոնի փիլիսոփայություն, բնության փիլիսոփայություն և պատմության փիլիսոփայություն: Այս երեք ոլորտները դիտարկվում են հետևողական կապի մեջ՝ իբրև բացարձակ ոգու ինքնագիտակցության անընդհատ պատմություն: Պատմության մեջ Շելլինգը տեսնում է բնության բարձրագույն արտահայտությունը: Սակայն, գոյություն ունի պատմություն իբրև պատմագրություն: Նա տարբերում է պատմության էմպիրիկ մշակման երկու ձև: Առաջինը փաստերի պարզ հետազոտությունն է, որը փորձում է վերհանել պատմական ճշմարտությունը, երկրորդն այն է, երբ պատմաբանը փորձարարական (էմպիրիկ) նյութը խմբավորում է որոշակի նպատակով՝ ուսուցողական (դիդակտիկ) կամ քաղաքական: Այս եղանակը Շելլինգը կոչում է պրագմատիկ: Օրինակ՝ Պոլիբիուսը կամ Տացիտոսը փորձում են բացատրել հռոմեական կայսրության անկումը իբրև բռնակալության և բարքերի ապականության հետևանք: Շելլինգը նշում է, որ իր ժամանակակիցները գործնական պատմությունը համարում են պատմության բարձրագույն եղանակ: Բայց ոչ մի առողջ մտածողություն ունեցող մարդ չի կարող այդ պատմությունը համարել առաջնակարգ դրա սուբյեկտիվ լինելու պատճառով: «Բայց չկա ավելի սրբազան բան, քան պատմությունն է, համաշխարհային ոգու հրաշագեղ հայելին, աստվածային բանականության հավերժական պոեմը, և չկա ոչինչ, որ այդքան հեշտությամբ տուժի ոչ մաքուր ձեռքերի հպումից» [16]: Պատմությունը պիտի գրվի էպիկական ոճով, որը չունի իր որոշակի սկիզբը և վերջը:

Համաշխարհային պատմության փիլիսոփայությունը բնութագրելու նպատակով Հեգելը անհրաժեշտ համարեց դիտարկել պատմագրության մյուս ձևերը՝ ա) նախնական պատմություն, բ) ռեֆլեկտիվ պատմություն, գ) փիլիսոփայական պատմություն:

Պատմության առաջին ձևի համար իբրև օրինակ նա բերում է Հերոդոտոսին և Թուկիդիտեսին, որոնք նկարագրում էին այն իրադարձությունները, որոնք հիմնականում ընթացել են իրենց աչքի առաջ և իրենք ներարկված են դրանց ոգով, ուստի պատմությունը տեղափոխում են իրենց հոգևոր պատկերացումների ոլորտ, ինչպես պոետը մշակում է նյութը իր պատկերացմամբ: Իհարկե այդ պատմիչները օգտվել են նաև ուրիշների հաղորդումներից և պատմածներից (մեկ մարդը չի կարող ամեն ինչին ականատես լինել): Այսպիսի նախնական պատմություն չեն համարվում լեգենդները, ժողովրդական երգերը: Այս ձևը վերարտադրում է պատմական կարճ ժամանա-

կաշրջաններ, երբ պատմագիրը հետահայաց չի կատարում, որովհետև հոգեպես կցվել է իր նյութին և դուրս չի գալիս դրանից:

Երկրորդ ձևը հետահայաց պատմությունն է: Այն բարձրանում է իր դարաշրջանից ոչ թե ժամանակով, այլ ոգով: Հիմնական խնդիրը, որ դրվում է պատմագրի առաջ՝ մշակել պատմական նյութը, որին նա մոտենում է իր պատկերացումներով, որը տարբերվում է նյութի ոգուց: Այս առումով չափազանց կարևոր են այն սկզբունքները, որ մշակում է պատմագիրը, և այն նպատակներն ու միջոցները, թե ինչպես է գրելու պատմությունը: «Մենք՝ գերմանացիներս, տարբերվում ենք անգլիացիներից և ֆրանսիացիներից, որովհետև յուրաքանչյուրը ձգտում է ինչ-որ առանձնահատուկ ձև ստեղծել՝ միևնույն ժամանակ գրելով պատմություն: Իսկ մենք միշտ ձգտում ենք սահմանել, թե ինչպես պետք է գրել պատմություն» [17]:

Հետահայաց պատմության ենթատեսակ է գործնական պատմությունը: Իրադարձությունները տարբեր են, բայց ընդհանուր է նրանց կապը: Դա կարծես վերացնում է անցյալը, այն դարձնում ներկա: Այսպիսով, գործնական ռեֆլեքսիան՝ իր ողջ վերացականությամբ հանդերձ, դառնում է ժամանակակից և լցվում ժամանակի ոգով, և հեղինակից է կախված, թե որքան կենդանի կդառնա: Այդ պատմությունները բարոյական և բարոյախրատական լիցք ունեն, հեղինակը դա դնում է իրադարձությունների հիմքում:

Հետահայաց պատմության մյուս ենթատեսակը քննադատական պատմությունն է: Այս տեսակը հատկապես գործուն է Գերմանիայում: Այս տեսակում շարադրվում է ոչ թե պատմությունը, այլ՝ պատմության պատմությունը: Այստեղ տրվում է պատմական շարադրանքի գնահատականը, որը կախված է գրողի խորաթափանցությունից: «Մեզ մոտ բարձրագույն քննադատությունը օրինաչափ է համարում ամենատարբեր ոչ պատմական երևույթների երևակայական հնարանքները: Այլ կերպ ասած՝ պատմական փաստը փոխարինվում է սուբյեկտիվ հնարանքով, ընդ որում այնպիսի հնարանքներով, որոնք առավել հաջողակ են համարում նրանք, ովքեր առավել համարձակ են, այսինքն՝ որքան աննշան և անպետք են հանգամանքները, որոնց վրա նրանք հենվում են, այնքան շատ են հակասում պատմության փաստերին» [18]: Հետահայաց պատմության ենթատեսակ է նաև այնպիսի պատմությունը, որը հանդես է գալիս իբրև մասնավոր, օրինակ՝ արվեստի, իրավունքի, կրոնի պատմությունը: Այս տեսակը շատ է մշակվել և մղվել առաջին պլան:

Այս բնագավառները կապի մեջ են գտնվում ժողովրդի ընդհանուր պատմության հետ: Անհրաժեշտ է բացահայտել այդ կապը: Սակայն այդ կապը փնտրում են միայն արտաքին հարաբերակցության մեջ: Այդ դեպքում նրանք հանդես են գալիս իբրև մասնավոր դեպքեր ժողովրդի կյանքի մեջ. նրանք համարվում են ոչ միայն արտաքին կապակցություններ և արտաքին կարգ, այլ ներքին հոգի, որոնք իրադարձությունը ուղղորդում են ժովովրդի կյանքի մեջ: Չէ՞ որ աշխարհը և ժողովուրդներին ղեկավարում է գաղա-

փարը` բացարձակ ոգին: Բանական և անհրաժեշտ կամքը ղեկավարել և ղեկավարում է համաշխարհային ընթացքը: «Հետազոտել ոգին, նրա ղեկավար դերը մեր բարձրագույն նպատակն է» [19]:

Հաջորդ տեսակը պատմության փիլիսոփայությունն է: Բանականությունը կառավարում է աշխարհը, հետևապես և պատմական իրադարձությունները փիլիսոփայությունն է ներմուծում պատմության մեջ: Պատմության մեջ արտացոլված է ոգին: Մատերիայի էությունը ձգողականությունն է, ոգու էությունը` ազատությունը: «Արևելյան ժողովուրդները չեն գիտակցում, որ իրենք ազատ չեն: Ազատությունը գիտակցում է մեկը, բայց նրա ազատությունը կամայականությունն է» [20]: Հույների մոտ ծնվեց ազատության գիտակցությունը, սակայն այն էլ սահմանափակվեց մի քանի անհատներով: Հույները չգիտակցեցին, որ մարդը ինքնին ազատ է, նույնիսկ Պլատոնը և Արիստոտելը դա չբացահայտեցին: Միայն գերման ազգերը, գալով քրիստոնեության, եկան այն գիտակցության, որ մարդը ազատ է և դա կազմում է ոգու էությունը: Այս գիտակցությունը սկզբում հանդես է գալիս ոգու ամենասրբազան ոլորտում` կրոնում: Ազատության իրականացումը մարդկության պատմության խնդիրն է: Ուստի համաշխարհային պատմությունը առաջընթացն է ազատության գիտակցման առումով: Իմաստավորել այդ առաջընթացը իր անհրաժեշտ զարգացման մեջ` սա է պատմության փիլիսոփայության խնդիրը: Դա հնարավոր է, քանզի բանականությունը, որը կառավարում է աշխարհը, գտնվում է նաև պատմության մեջ: Սակայն այս իշխող բանականությունը պարզապես գաղափար չէ, այլ` ստեղծագործական սկիզբ, որը ծնունդ է տալիս երևույթներին: Այս բանականությունը այնքան անզոր չէ, որ մնա լոկ գաղափարների սահմաններում: Նրա հզորությունը արտահայտվում է անվերջ բովանդակությամբ, որը բացվում է իրականության մեջ: Մատերիան բանականության համար ծառայում է իբրև սուբյեկտ և առարկա, ուստի անցում է կատարում իրականությանը և դառնում երևույթ: Սա հենց բանականությունն է, որը և՛ արարողն է, և՛ արարվածը:

Հակառակ Շելլինգի, որը հրաժարվեց բացատրել պատմության մեջ գործող ազատության օրենքները՝ Հեգելը լուծեց այս խնդիրը՝ տրամաբանության օրենքները կիրառելով պատմության նկատմամբ: Ըստ նրա` տիեզերքը ենթարկվում է մեկ հիմնական տրամաբանական օրենքի, այն է` դիալեկտիկայի օրենքը: Համաշխարհային պատմությունը բացարձակ ոգու արտացոլումն է, իսկ նրա բոլոր ձևական կառույցները այն աստիճաններն են, որոնցով ոգին հասնում է իր ինքնագիտակցությանը: Ստեղծել, իրագործել համաշխարհային ոգու անվերջ պահանջմունքն է, մինչև գործընթացի վերջում ոգին կհասնի իր լիարժեք գիտակցման:

Այսպիսով, Հեգելը փորձում է համաշխարհային ոգու զարգացմամբ դիտարկել պատմության մեջ առանձին պատմական ժողովուրդների հերթափոխը: Ոգու հատկանիշը ինքնագիտակցությունն է, ուստի և տվյալ ժողովրդի

պատմական զարգացումը հոգևոր ինքնության գիտակցումն է, իսկ դրա գիտակցումը ժողովրդի պատմական կյանքի բարձրագույն կետն է: Ոգու կյանքը պատմության մեջ աստիճանական զարգացումն է, անընդհատ բարելավումը: Դա էլ հենց առաջընթացն է, որը տեղի է ունենում պատմական ժողովուրդների հերթափոխով, որոնք առաջընթացի աստիճաններն են: Համաշխարհային պատմությունը շարժվում է արևի նման` արևելքից արևմուտք:

XIX դ. դարակազմիկ է եվրոպական պատմական գիտակցության համար: Սոցիալական աՌելի փոփոխությունները, քաղաքական և արդյունաբերական հեղափոխությունները հանգեցրին մշակութային գիտակցության պատմականացման, որն, իհարկե, սկսեց իմաստավորվել փիլիսոփայության մակարդակում: Փիլիսոփայությունը ձևավորում է իրականության ըմբռնման այն սկզբունքը, որը հետագայում կոչվեց պատմականություն: Ըստ Ֆրիդրիխ Մայնեկեի` պատմականության հայտնվելը արևմտաեվրոպական մտքի մեծագույն հոգևոր հեղափոխությունն է, որի հիմքում ընկած է այն հիմնադրույթը, որ ողջ իրականությունը իր էության մեջ պատմական է: Իր նախնական կայացման մեջ պատմականությունը ամուր կապված է փիլիսոփայական մետաֆիզիկական մտքի հետ, որն իր բարձունքին է հասնում Հեգելի մոտ: Այն զարկ է տալիս գիտական պատմագրությանը:

Հեգելյան դպրոցի բաժանումը ձախերի և աջերի, բացարձակ իդեալիզմի ընդհանուր համակարգի քայքայումը, պատմության փիլիսոփայությունը փոխարինվեց պատմական իմացության վերլուծությամբ: Այս ուղղության ներկայացուցիչները` Վ.Դիլթայը, Հ.Ռիկկերտը, Գ.Զիմմելը, կատարեցին հիմնական հարցադրումները, իսկ Մ.Վեբերը փորձեց այն ավարտել: Պատմական իմացության վերլուծությունը անվանվեց պատմական գիտակցության քննադատություն: Իսկ ի՞նչ հարաբերության մեջ է գտնվում պատմականությունը քննադատականության հետ: Այդ հարցին Ռ.Արոնը պատասխանում է պատմական հարաբերապաշտության իր մոտեցմամբ` հիմնվելով դարաշրջանի և արժեքների կապի վրա, որոնք փոխվում են դարաշրջանի փոփոխության հետ [21]: Պատմական հարաբերականության կողմնակիցներն են նաև Է.Տրյոլչը և Կ.Մանհեյմը: Ուստի կարելի է հաստատել, որ պատմությունը միշտ իրականանալի է փիլիսոփայական հիմքի վրա, հակառակ դեպքում կդառնա դեպքերի անհեթեթ շարք: Փիլիսոփայական ռեֆլեքսիան պատմության կարևորագույն գործառույթն է:

Հեգելյան համակարգի քայքայումը հանդես բերեց Ֆ.Նիցշեին, Մ. Հայդեգերին` պատմական իռացիոնալիզմի ներկայացուցիչներին, ըստ որոնց` դարաշրջանների հերթափոխը ունի անբանական, անիմաստ բնույթ, որ պատմությունը չունի ոչ մի նպատակ, յուրաքանչյուր իրադարձություն անիմաստ է: Նիցշեի համար «մարդկության պատմությունը անիմաստ ուղի է` անընդհատ սխալներով և մոլորություններով լի» [22]:

Նիցշեի հայացքները հսկայական ազդեցություն թողեցին ոչ միայն պատմագիտության վրա, այլ իր ժամանակի ողջ հասարակական մտքի վրա:

Պատմափիլիսոփայության մեջ Ֆ.Նիցշեի աշակերտն է Օ.Շպենգլերը իր՝ «Եվրոպայի մայրամուտը» գրքով: Օ.Շպենգլերի պատմափիլիսոփայությունը իր հակասականության պատճառով ենթարկվել է բազմաթիվ քննադատությունների, որոնցից ամենահամոզիչը Ռ.Արոնինն է: Օ.Շպենգլերը փորձում է տալ պատմական ամբողջականությունների կառուցվածքը: Շպենգլերի մոտեցումը հիմնված է այն գաղափարի վրա, որ հնարավոր է ընդգրկել բոլոր պատմական ամբողջականությունները, որոնք հանդես են գալիս մշակույթների տեսքով: Արդյո՞ք այդ քաղաքակրթությունները գոյություն ունեն իրականում, թե՞ միայն մասնագետների գլխում են: Չի՞ տանում արդյոք Շպենգլերի մեթոդը (բացարձակ բազմատեսակության դիտարկում) ողջ պատմության անդամահատման պատմական հատվածների, որոնք իրար հետ ոչնչով կապված չեն և չեն փոխանցվում մեկը մյուսին: Իրականում գոյություն ունե՞ն մշակույթները, թե՞ դրանք պատմական երևակայության արդյունք են: Շպենգլերի դատողությունները պարունակում են մետաֆիզիկական մոտեցում քաղաքակրթությունների վերլուծության մեջ: Ինչպե՞ս է հնարավոր ստեղծել հին հունական քաղաքակրթության ամբողջականությունը, երբ իրականում նրա սահմանները ըստ էության լղոզված են, անորոշ: Իրականում միասնությունը ստեղծվում է հետահայաց՝ պատմիչի (պատմագրի) կողմից: Շպենգլերի քննադատները՝ Տոյնբին, Արոնը և մյուսները, այս հարցադրումներին փորձում են տալ բավարար պատասխաններ: Շպենգլերի տեսակետից պատմությունը իբրև ամբողջականություն չի ենթարկվում ոչ մի օրենքի, բայց դրանով հանդերձ մշակույթները անցնում են զարգացման նույն փուլերը և ունեն խիստ պատճառակցական բնույթ: Այսինքն դժվար է իրականացնել այն պայմանները, որոնց հիմքի վրա կարելի է ապացուցել մշակույթների առկայությունը: Իհարկե չի կարելի ժխտել պատմական ամբողջականությունների բազմազանությունը, բայց այդ բազմատեսակությունից հնարավոր է կատարել մետաֆիզիկական եզրակացություն, որ պատմական ամբողջականությունները կենդանի օրգանիզմներ են, որոնք ծնվում են և մեռնում:

Երեք հայտնի պատմափիլիսոփայական հայեցակարգեր, որոնք ստեղծվել են XX դ., հնարավորություն են տալիս պատկերացնելու ժամանակակից պատմության փիլիսոփայության բնույթի մասին:

Թոյնբիի հայեցակարգը մշակութային ցիկլերի տեսության տարբերակն է. պատմությունը կազմվում է ինքնուրույն, իրար հետ թույլ կապված բազմաթիվ քաղաքակրթություններից: Նրա քաղաքակրթությունների տեսությունը շարունակում է Շպենգլերի գիծը և հանդիսանում է լոկալ քաղաքակրթությունների տեսության դասական օրինակը: Թոյնբին կրոնական մտածող է, որը երևում է պատմության նպատակների և իմաստի, պատմական առաջընթացի նրա մեկնաբանություններից: Պատմությունը աստծո ձեռքի գործն է, որն իրականանում է մարդու և մարդկության միջոցով: Պատմության հիմքում ընկած է համաշխարհային օրենքը՝ աստվածային բանակա-

նության և մարդկության փոխգործողությունը: Մարդկության պատասխանը աստվածային կոչին դառնում է պատմության բովանդակությունը: Մակերեսին պատմությունը բազմատեսակ է, իսկ իր խորքում՝ միագիծ, և ուղղված է Աստծուն հասու լինելուն (ըմբռնելուն)՝ մարդու ինքնաբացահայտման միջոցով: Հոգևոր առաջընթացը այս աստղի մեջ է. «Թող լինի կամքը քո, թող քո թագավորությունը լինի»: Կենտրոնական հասկացությունը քաղաքակրթությունն է: Այն չափանիշները, որոնցով Թոյնբին դասակարգում է քաղաքակրթությունները, շատ շարժուն են, բայց երկուսը հաստատուն են. դրանք են կրոնը և աշխարհամասի սկզբունքը: Այդ սկզբունքների համաձայն՝ Թոյնբին առանձնացնում է քսանմեկ քաղաքակրթություն, որոնցից յոթը՝ կենդանի, մնացածը՝ մեռած: Կան նաև կանգ առած քաղաքակրթություններ, որոնք ծնվել են, բայց իրենց զարգացման մեջ կանգ են առել (էսկիմոսներ, սպարտացիներ, քոչվորներ): Ահա իրականում պատմություն չունեցող ժողովուրդներ:

Թոյնբիի դիրքորոշումը կարելի է բնութագրել իբրև մշակութաբանական պլյուրալիզմ: Հաջողությամբ զարգացող քաղաքակրթությունները անցնում են ծագման, աճի, բեկման և քայքայման շրջանները: Առաջին երկուսը կապված են կենսական էներգիայի պոռթկման, վերջին երկուսը՝ կենսական էներգիայի հատվելու (հյուծվելու) հետ: Պատմական իրադրությունները, որոնց մեջ մտնում են և՛ մարդկային, և՛ բնական գործոնները, հասարակության առաջ հանկարծակի դնում են խնդիր, կոչ նետում նրան: Հասարակության առաջընթացը կախված է նույն հասարակության այդ կոչին պատասխանելու ունակությունից, ցույց տալու համապատասխան դիմադրություն: Բոլոր կոչերը կա՛մ բնական միջավայրի արդյունք են, կա՛մ՝ մարդկային գործողությունների: Օրինակ՝ ռուսական քաղաքակրթությունը դարձավ այդպիսին՝ պատասխանելով քոչվոր ցեղերին: Ռուսները ձեռք բերեցին նոր համախմբում, էթնիկ գիտակցություն և նոր հասարակական կազմակերպվածություն: Բոլոր այդ «պատասխանների» դեպքում գործում է սոցիալական հետևյալ օրենքը՝ որքան ուժեղ է կոչը, այնքան ուժեղ է խթանը: Սակայն շատ դաժան կոչը հակառակն է գործում. ոչնչացնում է հանրույթը և մշակույթը: Թոյնբին զգուշացնում է նաև, որ նյութական գերհագեցվածությունը, տեխնիկական առաջադիմությունը, բարիքների առատությունը կարող են դառնալ քաղաքակրթության անկման և կործանման պատճառ և հակառակը՝ տեխնիկան չի զարգանում, բայց տեսնում ենք, որ քաղաքարթությունը դինամիկ զարգանում է:

Եվս մի հետաքրքիր դիտարկում է կատարում Թոյնբին. քաղաքակրթության աճը ստեղծագործական անհատների ձեռքի գործն է, որոնք բոլոր ժամանակներում փոքրամասնություն են կազմում: Յուրաքանչյուր աճող քաղաքակրթության մեջ ժողովրդի հսկայական մասը դուրս չի գալիս լճացման վիճակից: Թոյնբիի հայեցակարգը զարմացնում է նախաձեռնության անսահմանությամբ՝ ընդգրկել բոլոր հանդես եկած քաղաքակրթությունները՝ մանրամասնելով, ճշգրիտ հետաքննությամբ: Սակայն Թոյնբին,

լինելով XX դարի մտածող, պատմությունը համարում է շարժման մեջ գտնվող աստվածային ստեղծագործական ուժ: Կրոնները դրվում են դասակարգման հիմքում, որն էլ որոշակի անհամապատասխանություններ և արհեստականություն է առաջացնում: Օրինակ՝ արևմտյան քաղաքակրթության զարգացումը (որի մեջ կրոնը մեծ դեր չի խաղում) մնում է չբացահայտված: Թոյնբին փախուստ է տալիս անցյալ՝ հասկանալով իր թուլությունը Նոր ժամանակի հետ կապված: Ժամանակակից նյութի մեջ Թոյնբին չի խորանում: Ուստի նա համարյա ոչինչ չի ասում XX դարի մասին, իսկ 19-րդ դարը հիշում է հպանցիկ: Թոյնբին կապիտալիզմին մեղադրում է նոր տեսակի կռապաշտության մեջ, որը չափազանց արատավոր է: Մարդապաշտությունը, մարդու ինքն իրեն երկրպագումը նա Արևմուտքի նոր կրոնն է համարում [23]:

Կ.Յասպերսի տեսությունը պատմության գծային ձևաչափին է վերաբերում: Պատմությունը անցնում է մի քանի ճգնաժամային հատվածներ, որոնցից յուրաքանչյուրը որոշում է նախորդ դարաշրջանը: Նրա ուշադրության կենտրոնում համաշխարհային պատմության միասնության խնդիրն է: Նա թերահավատ է XX դ. առաջին կեսի տեսությունների (Շպենգլեր, Թոյնբի) մշակութաքաղաքակրթական բոլորաշրջանների հանդեպ: Յասպերսի տեսակետով՝ չնայած մշակույթների այդքան տարբերություններին՝ մարդկությունը ունի միասնական արմատներ և զարգացման միասնական ուղի: Մարդկությունը ունի նաև միասնական պատմական նպատակ, որը բացահայտվում է միայն փիլիսոփայական վերլուծությամբ: Պատմությունը ունի գծային բնույթ: Յասպերսը ժխտում է մարդկության ծագման և պատմության աստվածային միջամտությունը: Նա պատմությունը բաժանում է երեք հերթագայող փուլերի՝ նախապատմություն, պատմություն և համաշխարհային պատմություն: Մտածողը ընդունում է նաև առանցքային ժամանակաշրջանի գոյությունը (800-200թթ. մ.թ.ա.), երբ պատմության մեջ տեղի է ունենում կտրուկ շրջադարձ և առաջանում է մարդու ժամանակակից տեսակը: Քրիստոնեական պատմության ելման կետը պատմական զարգացման մեջ համարում է Քրիստոսի հայտնությունը, չնայած Հեգելը գտնում էր, որ, ճիշտ է, քրիստոնեությունը հանդես է գալիս որպես պատմության մեկ պահ, բայց պատմական գործընթացը տանում է դեպի Քրիստոսը և հետո նրանից է մղվում, և Քրիստոսի հայտնությունը դառնում է համաշխարհային պատմության առանցքը:

Յասպերսը հրաժարվում է այդպիսի դրվածքից, քանի որ նա համարում է, որ Քրիստոսի հայտնությունը նշանակություն ունի միայն քրիստոնեական աշխարհի համար, իսկ պատմական առանցքը պիտի համապատասխանի բոլոր ժողովուրդներին: Առանցքային ժամանակաշրջանը շատ հարուստ է. Չինաստանում հայտնվեցին Կունֆուցզին, Լաոցզին և չինական այլ ուսմունքները, Հնդկաստանում՝ Ուպանիշադները, Բուդդան, Իրանում՝ Զրադաշտը, Պաղեստինում՝ մարգարեները, Հունաստանում՝ Հոմերոսը, Հերակ-

լիտեսը, Պլատոնը: Այս բույլը ծաղկեց միանգամից: Մարդը գիտակցեց իր գոյությունը, իր հնարավորությունները, առաջացան այն կատեգորիաները, որոնցով մարդը մտածում է մինչև օրս, և տեղի ունեցավ դիցաբանական աշխարհայացքից անցում փիլիսոփայության և գիտության: Յասպերսը չի փորձում բացատրել, թե ինչպես է առաջացել առանցքային ժամանակաշրջանը: Նա ընդգծում է, որ միասնական մարդկության ձևավորումը և ընդհանուր պատմության ստեղծումը հանդիսանում է XX դ. պատմափիլիսոփայության կենտրոնական խնդիրը: Յասպերսը հաստատում է Խ.Օրտեգա-ի- Գասետի այն միտքը, որ պատմական թատերաբեմի վրա գործում են արդեն ոչ թե ժողովուրդները, այլ՝ մասսաները: Այդ պատճառով անգիտակցական ուժերը առաջացնում են ֆաշիզմ և բոլշևիզմ: Կոլեկտիվիստական համախմբերը վերածվում են տոտալիտար հասարակությունների: XX դ. գլխավոր սպառնալիքները կապված են տոտալիտար կոլիկտիվիստական հասարակությունների հետ: Արդյունքում ժողովուրդները վերածվում են անդեմ զանգվածի, որը հատկապես ենթակա է քարոզչության, հեշտ գրգռվում է և մոլեռանդ է: Այս հասարակությունը ամենակարևոր խնդիրը համարում է նոր մարդու ստեղծումը, որը բարոյականությամբ և խղճով ծանրաբեռնված չէ, որ ազատության կարիք չունի և խիստ գոհ է պետական մեքենայի պտուտակներից մեկը լինելու իր դերից [24]:

Յասպերսի պատմափիլիսոփայությունը XX դ. հետաքրքիր համակարգված տեսություններից մեկն է:

Ժամանակակից պատմական գիտակցությունը բնութագրվում է սոցիալ-պատմական իրականության վրա իր կենտրոնացմամբ՝ ներկայի և տեսանելի ապագայի ձևաչափում: Ներկան կարիք չունի ո՛չ ապագայի և ո՛չ էլ անցյալի կողմից իմաստային հրահանգավորման: Ներկան պատմականորեն ինքնաբավ է և ունի համապատասխան իմաստային համապարփակվածություն: Այս ամենից բխում է, որ նորագույն դարաշրջանին հատուկ է որոշակի անպատմականություն: Այն կապված է մի շարք գործոնների հետ: Մարդկության այսօրվա դրությունը անպտուղ է համարում անցյալում փնտրել օրինակներ և դասեր: Հետազոտողների մի խումբ պատմությունը դիտում է իբրև պատահական առաջացած իրադարձությունների և գործընթացների համախումբ: Կ. Պոպպերը, քննադատելով հատկապես Մարքսի «պատմական մարգարեությանը», մերժում է պատմության մեջ և սոցիալական կյանքում բոլոր տեսակի կանխագուշակումները, ինչպես նաև այն օրինաչափությունները, որոնց վրա դրանք հիմնված են [25]: Մարդկությունը հեռացել է իր ավանդույթներից և չի ընդունում դրանց նորմատիվ-պարտադիր բնույթը, աստիճանակարգությունը: Սոցիալական կյանքը ավելի է կապվում կառավարման և պլանավորման հետ, որը դարձնում է այն կանխատեսելի և հաշվարկելի: Զարգացումը պլանավորվում է տեխնիկական և սոցիալ-տեխնոլոգիական հիմքի վրա: Այս գործընթացները հնարավորինս նվազեցնում են պատմական ռեսուրսների օգտագործումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Трельч Э.* Историзм и его проблемы // М.: «Юрист», 1994. СС. 606–607.
2. *Достоевский Ф.* Полное собр. соч. Т.18. С. 55.
3. *Трельч Э.* Историзм и его проблемы // М.: «Юрист», 1994. СС. 600–606.
4. *Вико Дж.* Основания новой науки об общей природе наций // М., Киев, REEL-book, 1994. С. 35.
5. *Тацит. Анналы,* книга III, Соч. в двух томах, Т. I, М.: «Ладомир», 1993. С.18.
6. *Бердяев Н.* Смысл истории // М.: «Мысль», 1990, 173 с.
7. Философия истории. Антология / Сост. Ю.А. Кимелев М., 1995. СС. 3–18.8. Տե՛ս` Макиавелли Н., Государь. Рассуждения о первой декаде Тита Ливия // М.: «Мысль», 1996.
9. Бэкон Ф. О достоинстве и приумножении наук // Соч. в 2-х томах, М.: «Мысль», 1977–1978, Т.1. С. 81.
10. Նույն տեղում:
11. *Вико Дж.* Основания новой науки об общей природе наций. С. 36.
12. *Гердер И.* Идеи к философии истории человечества // М.: «Наука», 1977. СС. 228–234.
13. Նույն տեղում, էջ 456:
14. Նույն տեղում, էջ 457:
15. *Кант И.* Соч. в 6-и томах, Т.6. СС. 5–23.
16. *Шеллинг Ф.* Система трансцендентального идеализма // Соч. в 2-х томах, Т.1, М.: ,Мысльե, 1981. С. 609.
17. *Гегель Г.* Философия истории // Соч. в 14-и томах, М-Л., Гос. изд-во, 1929–1958гг., Т.8. СС. 3–12.
18. Նույն տեղում, էջ 51–75:
19. Նույն տեղում, էջ 50–51:
20. Նույն տեղում, էջ 48–50:
21. *Арон Р.* Избранное: Введение в философию истории // М.-СПб, 2000. С. 528.
22. *Ницше Ф.* Рождение трагедии или эллинство и пессимизм // Соч. в 2-х томах, М.: «Мысль», 1990. Т.1. СС. 47–57.
23. *Тойнби А.* Постижение истории. Избранное // М.: «Айрис Пресс», 2001. 640 с.
24. *Ясперс К.* Смысл и назначение истории // М.: «Политиздат», 1991. СС. 400–480.
25. *Поппер К.* Открытое общество и его враги // М.: «Феникс», Т.2, 1992. СС. 305–310.

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ЕВРОПЕЙСКОЙ ФИЛОСОФИИ ИСТОРИИ

А.К. Казарян

АННОТАЦИЯ

В статье освещаются основные тенденции развития европейской философии истории с акцентированием основных целей и задач осмысления последних на каждом этапе развития философско-исторического сознания европейца. В контексте каждой культурно-исторической эпохи и в соответствие с целями логической последовательности синтезируется основная философско-историческая проблематика европейской философии истории. Автор обращается к философско-историческим воззрениям европейских философов и мыслителей, идеи которых не только оказали заметное влияние на

развитие европейской философско-исторической линии, но и продолжают оставаться актуальными и ныне.
Ключевые слова: европейская философия истории, мифологическое сознание, история эмпирическая и философская, европейская философско-историческая традиция, идея всемирной истории, европейское историческое сознание, идея общественного прогресса.

THE MAIN TRENDS IN THE DEVELOPMENT OF EUROPEAN PHILOSOPHY OF HISTORY

A. Ghazaryan

SUMMARY

The article highlights the main trends in the development of European philosophy of history with an emphasis on the main objectives and tasks at every stage of the development of philosophical and historical consciousness of Europeans. In the context of each cultural-historical era and with the relevant objectives in a logical sequence the basic philosophical and historical perspective of European history of philosophy is synthesized. The author addresses the philosophical and historical views of European philosophers and thinkers whose ideas have not only had a significant influence on the development of European philosophical and historical lines, but also continue to be relevant to the present time.
Keywords։ European philosophy of history, mythological consciousness, empirical and philosophical history, European philosophical-historical tradition, idea of universal history, European historical consciousness, idea of social progress.

ЖУРНАЛИСТИКА

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԳԼՈԲԱԼ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Դ. Վ. Սարգսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից փուլը հատկանշվում է եվրոպական և եվրասիական տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների ակտիվացմամբ: Հոդվածում քննվում են արևելաեվրոպական և հարավկովկասյան հետխորհրդային երկրների քաղաքական ինտեգրմանն առնչվող տեղեկատվական իրողությունները: 2010–2015թթ. աշխարհաքաղաքական ընտրության շուրջ Հայաստանի «ալեբախումներն» առավելագույնս վառ են ներկայացնում ուժային կենտրոնների միջև տեղեկատվական դիմակայության բոլոր նրբերանգները:

Հիմնաբառեր՝ «Արևելյան գործընկերություն», Եվրամիություն, Եվրասիական միություն, Ասոցացման պայմանագիր, եվրոպական ինտեգրում:

«Արևելյան գործընկերություն» ծրագրի մեկնարկը 2009թ.-ին ուղեկցվեց ներեվրոպական տեղեկատվական դաշտում վեց երկրի՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Բելառուսի և Մոլդովայի մասին տեղեկատվական աննախադեպ արշավով: Խորհրդային միության փլուզումից ի վեր այս երկրները նման հետևողականությամբ և եվրոպական հանրույթում ներառվելու տրամադրությունների համատեքստում չէին լուսաբանվել: Եվրաասոցացման ընթացքի մասին թողարկումներ էին տալիս և՛ Եվրամիության պաշտոնական լրատվամիջոցները, և՛ եվրոպական առաջատար պարբերականներն ու էլեկտրոնային մեդիան, և՛ ուղեղային կենտրոններն ու փորձագիտական դաշտը: Վերջինս՝ ի տարբերություն մամուլի էյֆորիկ տրամադրությունների, համեմատաբար իրատեսորեն էր գնահատում վեց երկրների ասոցացման հեռանկարի հնարավորությունը: Մյուս կողմից, եվրոպացի սյունակագիրները հիշեցնում էին, որ Եվրամիության ընդլայնման հերթական ալիքը կարող է լուրջ փորձություն դառնալ առաջին հերթին հենց եվրոպական հանրության համար:

«Արևելյան գործընկերության» մեկնարկից ընդամենը մեկ տարի անց՝ 2010թ.-ի կեսերին, Հին Եվրոպայի՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի առաջատար լրատվամիջոցները գուժում են ծրագրի տապալումն ու վերիհանում եվրոպական հարևանության քաղաքականության

խնդրահարույց հայեցակետերը: Ֆրանսիական «Լը Մոնդը» տարակուսում է, թե ինչպես կարող է Եվրամիությունը 76 միլիոն ընդհանուր բնակչություն ունեցող վեց երկրի մինչև 2013թ. տրամադրել ընդամենը 600 միլիոն եվրո ֆինանսական օգնություն [1]: Բրիտանական «Գարդիանն», ընդհակառակը, հույսեր է տածում, թե Բելառուսի ինքնաբավ բռնապետ Ալեքսանդր Լուկաշենկոն և Վրաստանի հակառուս նախագահ Միխեիլ Սահակաշվիլին կհաջողեն ընդդիմանալ Մոսկվային [2]:

Եվրոպական մամուլն ընդհանուր առմամբ հանգում է նրան, որ «Արևելյան գործընկերության» մասնակից երկրների ճակատագիրը որոշվում է ոչ այնքան այդ երկրների և Եվրամիության, որքան Բրյուսել-Մոսկվա ուղիղ կապերի արդյունքում: 2010թ.-ից ի վեր անցկացվող Ռուսաստան-Եվրամիություն գագաթաժողովների օրակարգի հիմնական հարցերից մեկը հենց արևելաեվրոպական և հարավկովկասյան երկրների աշխարհաքաղաքական կողմնորոշման շուրջ քննարկումներն էին [3]: Ընդ որում, հատկանշական է ոչ միայն մասնակից երկրների քաղաքակրթական կողմնորոշման շուրջ բանավեճը, այլև դրանցից ակնկալվող իրատեսական օգուտներն էներգետիկայի, տրանսպորտային տարանցման և այլ ոլորտներում [4]:

Լեհ փորձագետները նշում են, թե «Արևելյան գործընկերությունը» Եվրամիությունում Լեհաստանի նախագահության սեզոնային նախագիծն է (2011թ. երկրորդ կես): Այն մեծ էնտուզիազմով նախաձեռնած Լեհաստանի մամուլն արձանագրում է դրա անմխիթար վիճակը. չկան կայուն ինստիտուտներ, բավարար ֆինանսավորում, քաղաքական խոստումներն ու տնտեսական օգուտները բացակայում են [5]: Որոշ վերլուծաբաններ էլ ծրագրի կենսունակությունն ու դեպի Արևելք Եվրամիության ընդլայնման հեռանկարը կապում են բացառապես Եվրոպայի էներգետիկ ինքնաբավության հետ՝ նշելով, թե էներգակիրների այլընտրանքային ուղիների դեպքում Եվրամիությունը կկարողանա Մոսկվայի հետ առավել անկաշկանդ պայմանավորվել արևելյան հարևանների հարցում [6]:

Ուշագրավ է, որ արևմտաեվրոպական լրատվամիջոցներն առավել հանդարտ են վերաբերվում Ասոցացման պայմանագրի հնարավոր կնքմանը և արևելյան գործընկերների կողմնորոշմանը, քան, ասենք, մերձբալթյան և արևելաեվրոպական լրատվադաշտը: Լատվիական, լիտվական, էստոնական և լեհական մամուլը՝ որպես նախկին խորհրդային ազդեցության գոտու ներկայացուցիչ, ընդգծված ուշադրությամբ է լուսաբանում արևելյան գործընկերների՝ Եվրամիության հետ գործակցության խորացման ցանկացած քայլ: Հակառակը, Ռուսաստանի կողմից ճնշումները, սպառնալիքները կամ այդ երկրների ռուսամետ քայլերն ու հայտարարություններն առաջ են բերում վերոնշյալ լրատվամիջոցների բուռն վրդովմունքն ու անհանգստությունը:

Արդեն վիլնյուսյան գագաթաժողովի նախօրեին, դրա ընթացքում և Ուկրաինայի կատարած ընտրությունից ու այդ երկրում սկիզբ առած

հուզումներից հետո եվրոպական մամուլն ուրվագծում է դեպքերի մեղիաընկալումները, որոնք շուտով գերակշռող են դառնում նաև ուկրաինական լրահոսում. Մոսկվան զգուշանում է Ուկրաինան կորցնելուց, քանի որ ազատ առևտրի եվրասիական գոտին առանց այդ երկրի իմաստազուրկ է՝ չունի ելք դեպի Եվրոպա: Ապա, ի՞նչ արժե ուկրաինական ինքնիշխանությունը, եթե Յանուկովիչը Կրեմլի ճնշմամբ հրաժարվում է Ասոցացման պայմանագրի ստորագրումից: Ինչի՞ է պատրաստ Եվրամիությունը՝ հանուն Ուկրաինայի. դեռևս՝ ի պատասխան Կիևի ռուսամետ ժեստերի, Բրյուսելը բավարարվում է ընտրողական արդարադատության քննադատությամբ՝ դատապարտելով Յուլյա Տիմոշենկոյի բանտարկությունը [7]: Մոսկվա-Կիև-Բրյուսել եռակողմ թնջուկը մինչև 2014թ.-ի փետրվար՝ իշխանափոխությունն Ուկրաինայում, մամուլում զարգանում է հենց այս հարցադրումների տրամաբանությամբ:

Միաժամանակ, եվրոպական լրատվադաշտը փորձում է ռացիոնալ բացատրություններ գտնել Կիևի նման վարքին: Ֆրանսիական մամուլը հիշեցնում է, որ Ուկրաինան իր քաղաքական համակարգով առավել մոտ է Ռուսաստանին, իսկ ԵՄ-ի հետ ասոցացվելու դեպքում այն կզրկվեր ռուսաստանյան շուկայից, գազը կթանկանար: Նման սպառնալիքներ հնչում էին նաև Մոլդովայի հասցեին, թեև այդ երկիրը, վերջնարդյունքում, ստորագրեց համաձայնագիրը: Նման կերպ վարվեց նաև Վրաստանը. այս երկու երկրները, սակայն, ստիպված են համակերպվել տարածքային կորստի հետ [8]: Եվրոպական պարբերականներն «Արևելյան գործընկերության» երկրների տարբեր վարք դրսևորելու արդյունքում, փորձելով հասկանալ Բրյուսելի կամ Մոսկվայի օգտին որոշում կայացնելու պատճառները, նշում են նաև այդ երկրների առանձնահատկությունները. ասենք, Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության մտադրությունը մեկնաբանվում է որպես արցախյան հակամարտությունը չսրելու դրդմամբ պայմանավորված քայլ:

2014թ.-ի սկզբին՝ Կիևում սկսված զանգվածային անկարգություններին զուգահեռ, եվրոպական մամուլը ցավով արձանագրում է, որ Եվրամիությունը միասնական տեսլական չունի ուկրաինական ճգնաժամի հանգուցալուծման հարցում: Հունվարին այդ երկրում ընդունված «դրակոնյան օրենքներն» արժանանում են արևմտյան մեդիայի բուռն քննադատությանը: Սակայն անգամ այս դեպքում եվրոպական առաջատար պարբերականներն այդ երկրում վերահաս իշխանափոխություն դեռևս չեն կանխագուշակում [9]: Արդեն մեկ ամիս անց՝ 2014թ.-ի փետրվարին, եվրոպական մամուլն արձանագրում է, որ ուկրաինական նմանօրինակ զարգացումներն անգամ ամենամռայլ երազում չէին կարող պատկերացնել. Արևմուտքը շատ է հեռացել այդ երկրից, իսկ Ռուսաստանը չափից ավելի է ճնշում նրան: Ուկրաինական հեղափոխությունը ֆրանսիական մամուլին հիշեցնում է իշխանության բռնի փոփոխության եգիպտոսյան և ոչ թե լեհական տարբերակը [10]:

2015թ.-ի Ռիգայի գագաթաժողովից հետո եվրոպական մամուլն արձանագրում է եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի հիմնական արդյունքները, որոնք ամենևին էլ լավատեսական չեն: Նախ, «Արևելյան գործընկերության» մասնակիցներից երկուսը՝ Հայաստանն ու Բելառուսը, Եվրասիական տնտեսական միության անդամ են: «Արևելյան գործընկերությունը»՝ որպես Մոսկվայի հետ փոխզիջումային ծրագիր, ձախողվել է, և այժմ Մոսկվան է Բրյուսելին թելադրում Եվրամիության արևելյան հարևանության ուղեգիծը: Տնտեսական հսկա լինելով՝ Եվրամիությունը լուրջ բացեր ունի աշխարհաքաղաքականության և տարածաշրջանային քաղաքականության հարցերում: Միաժամանակ, փորձագիտական գնահատականներով, այժմ՝ քաղաքական նոր իրողությունների հաշվառմամբ, Եվրոպայում շատ ավելի չափավոր ու լոյալ են տրամադրված Ռուսաստանի նկատմամբ, քան ծրագրի գործողության ընթացքում [11]:

«Արևելյան գործընկերության» մասնակիցների անմիատարրության լավագույն վկայությունը նրանց հատկացվող ֆինանսական օգնության չափն է, կարծում է լատվիական մամուլը: Այսպես, Եվրամիության համար իր կարևորությամբ առանձնացող Ուկրաինան հույս ունի 2014–2017թթ.-ի համար ստանալ կես միլիարդ, Վրաստանն ու Մոլդովան՝ մինչև 400-ական միլիոն, Հայաստանը՝ մինչև 170 միլիոն, Բելառուսն ու Ադրբեջանը՝ 80-ական միլիոն եվրո [12]: Հարավկովկասյան երկրները հատկապես ուկրաինական հակամարտության սրումից հետո եվրոպական և անգամ ռուսաստանյան մեդիայում մղվում են երկրորդ պլան. արձանագրվում է, որ այդ տարածաշրջանի հակամարտությունները՝ արցախյանը, աբխազականն ու հարավօսականը, սառեցված են, մինչդեռ Դոնբասում արյունահեղություն է: Հարավկովկասյան երկրների և Եվրամիության գործակցության նախապատմությանը ևս հատուկենտ լրատվամիջոցներ են անդրադառնում. հիմնական մասը որպես լուսաբանման մեկնակետ է ընդունում 2008–2009թթ. «Արևելյան գործընկերության» մեկնարկը [13]:

Եվրոպական լրատվադաշտը Ռուսաստանի իշխանությունը տեսնում է ի դեմս բացառապես Վլադիմիր Պուտինի, ընդ որում՝ նրա՝ և՛ նախագահ (2012թ.-ից), և՛ կառավարության ղեկավար (2008–2012թթ.) աշխատած ժամանակներում: Դմիտրի Մեդվեդևի կերպարը եվրոպական մեդիայում առավել առաջադեմ, բաց, գործընկերային ու փոխզիջումային առաջնորդի է, թեև նրա նշանակությունը ռուսաստանյան բարձրագույն իշխանությունում խորհրդանշական է: Որոշ պարբերականներ հիշեցնում են մինչև Պուտինի հետ Մեդվեդևի փոխատեղումը Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի այն պնդումը, թե հենց Մեդվեդևը պետք է առաջադրվի երկրորդ ժամկետի համար: Քանի որ Պուտինը 2012թ.-ին իր ընտրությունից հետո որպես հիմնական առաջնահերթություն է հռչակում Եվրասիական միության ստեղծումը, եվրոպական փորձագիտական դաշտն անմիջապես կանխագուշակում է, որ իր ֆորմալ դիրքին վերադարձած Ռուսաստանի առաջնորդը չի բավարարվի իր երկրի՝

տարածաշրջանային տերության դերով և կակտիվացնի նոր կայսրության վերակերտման փորձերը [14]:

Առաջատար եվրոպական պարբերականներն իրենց առաջնորդներին են մեղադրում Ուկրաինայում դրության ապակայունացման համար: Եթե Եվրամայդանի շրջանում մամուլը գրում էր, թե Ռուսաստանն ու Ուկրաինան կորցրեցին իրար, Եվրոպան էլ՝ Ուկրաինային, ապա հակառուսաստանյան պատժամիջոցների սահմանումից ամիսներ անց մեդիադաշտն իրողությունները գնահատում է նաև այլ անկյան տակ՝ պնդելով, որ Եվրամիությունը կորցրեց Ռուսաստանը: Գերմանական մամուլը նման ձախողումների համար ուղղակիորեն մեղադրում է Անգելա Մերկելին [15]: Ամերիկյան լրատվամիջոցները ևս արձանագրում են իշխանափոխված Ուկրաինայի հարցում Եվրամիության ոչ միանշանակ, քառտիկ վերաբերմունքը՝ պատասխանատվության հիմնական բեռը դարձյալ դնելով գերմանական իշխանությունների վրա [16]: Ամերիկյան մամուլը, ինչպես և այդ երկրի իշխանությունները, շատ ավելի կտրուկ են արտահայտվում Ռուսաստանի մասին՝ այն անվանելով ռևանշիստական պետություն, միաժամանակ քննադատում են եվրոպացի առաջնորդներին քաղաքական կամքի բացակայության և Մոսկվայի նկատմամբ չափից դուրս մեղմ գտնվելու համար:

Եվրաինտեգրման համատեքստում արևելաեվրոպական երկրների և հատկապես Ուկրաինայի մասին անդրադարձերի կողքին ուշագրավ են նաև հարավկովկասյան տարածաշրջանում գերտերությունների հատվող շահերի և դրանց շուրջ գոյություն ունեցող մեդիաընկալումների մասին հարցերը: Եթե Ռուսաստանը առավել կամ նվազ չափով և հիմնականում խորհրդային իներցիայով մշտապես ներկայացված է եղել տարածաշրջանի երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում, հետևաբար նաև՝ մամուլի հրապարակումներում, ապա Եվրամիության նկատմամբ մեդիաուշադրությունը հասունացել է աստիճանաբար և մամուլում զգալի դարձել միայն 2000թթ.-ականների սկզբին: Սակայն Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը եվրոպական թեմատիկայի առանձնահատուկ, շատ բաներով իրարից տարբերվող օրակարգեր են ունեցել, չնայած տարածաշրջանային ընդհանրությանը:

Ռուսաստանյան փորձագիտական հանրությունն ու մամուլն ի սկզբանե կասկածի տակ էին առնում արևելյան գործընկեր երկրներում քաղաքական բարեփոխումներ իրականացնելու Եվրամիության անկեղծ ցանկությունը. փոխարենն առաջնայնությունը տալիս էին ծրագրի էներգետիկ բաղադրիչին, մասնավորապես՝ Ռուսաստանը շրջանցող Եվրոպայի էներգամատակարարման ուղիների հարցին՝ Մոսկվայից էներգետիկ կախումը թուլացնելու նպատակով: Միաժամանակ կանխատեսվում էր, որ Մոսկվան առատորեն կօգտվի էներգետիկ դիվանագիտությունից՝ որպես ԵՄ-ում հակառուսական հռետորաբանությամբ աչքի ընկնող պետությունների՝ մերձբալթյան երկրների, Լեհաստանի ու նրա հարևանների վրա ճնշում գործադրելու միջոց:

Ըստ ռուսաստանցի սյունակագիրների՝ Բրյուսելն իրականում հետաքրքրված է արևելքում այլընտրանքային էներգետիկ աղբյուրներ առաջարկող երկրներով՝ Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Իրան, Իրաք:

Սակայն էներգետիկ գործոնից առավել ռուսաստանյան մամուլը հակված է դիտարկելու «Արևելյան գործընկերությունը» որպես հետխորհրդային տարածքում Ռուսաստանի աշխարհաքաղաքական ազդեցության սահմանափակման և Եվրամիության դերի մեծացման փորձ: 2008թ.-ի ռուս-վրացական պատերազմի և 2009թ.-ի ռուս-ուկրաինական գազային դիմակայության ժամանակ Բրյուսելն անվերապահորեն աջակցեց համապատասխանաբար Վրաստանին և Ուկրաինային: «Արևելյան գործընկերությունն» ընկալվում էր որպես աջակցության նման քայլերի ինստիտուցիոնալացման, պաշտոնականացման փորձ: Բրյուսելը, սակայն, ամեն առիթով նշում էր, որ ծրագիրը հակառուսական նախաձեռնություն չէ, այլ՝ ընդամենը պատասխան ԵՄ-ի արևելյան հարևանների եվրոպական ձգտումներին [17]:

Երբեմն ռուսաստանցի վերլուծաբանները մեղադրում են նաև ԱՄՆ-ին Եվրամիությանը հակառուսական քաղաքականություն պարտադրելու հարցում: Ռուսաստանյան փորձագիտական դաշտի ձևավորած միասնական գաղափարաբանությամբ՝ Եվրամիությունը, լինելով Ռուսաստանի անմիջական հարևանը, շահագրգռված չէ Մոսկվայի հետ կապերի վտանգմամբ: Սակայն Բրյուսելը, հետևելով Ռուսաստանի զսպման Վաշինգտոնի ուղեգծին, դիվանագիտության ուժով նախկին միութենական հանրապետությունների համար ստեղծում է նոր նախաձեռնություններ, շռայլում քաղաքական և տնտեսական առատ խոստումներ [18]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://www.lemonde.fr/idees/article/2010/06/01/l-europe-a-court-d-ambition-face-a-son-partenariat-oriental-par-natalie-nougayrede_1366100_3232.html - L'Europe à court d'ambition face à son Partenariat oriental, par Natalie Nougayrède.
2. http://www.theguardian.com/world/2010/jul/22/belarus-georgia-alliance-russia - Belarus and Georgia get together for a few potshots at Russia.
3. http://carnegieendowment.org/2012/12/25/end-of-eu-russia-relationship-as-you-know-it/ewmq - The end of the EU-Russia relationship as You know it.
4. http://www.theguardian.com/world/2010/jul/22/belarus-georgia-alliance-russia - Belarus and Georgia get together for a few potshots at Russia.
5.http://www.krytykapolityczna.pl/Wywiady/KowalPartnerstwoWschodniepraktycznieniefunkcjonuje/menuid-1.html - Partnerstwo wschodnie praktycznie nie funkcjonuje.
6. http://www.polskatimes.pl/artykul/522193,saryuszwolski-rosja-zmieni-sie-wtedy-gdy-ue-bedzie-miala-wiecej-zrodel-energii,id,t.html - Saryusz-Wolski: Rosja zmieni się wtedy, gdy UE będzie miała więcej źródeł energii.
7. http://www.theguardian.com/commentisfree/2013/nov/20/ukraine-russia-eu-confrontation-membership-dangerous - Ukraine, Russia and the EU: does it have to be about brinkmanship?

8. http://www.slate.fr/story/80289/ukraine-russie-europe-plus-la-meme - L'Ukraine retourne dans le giron russe et Poutine change le visage de l'Europe.
9. http://www.lemonde.fr/europe/article/2014/01/21/l-union-europeenne-embarrassee-par-la-crise-en-ukraine_4351635_3214.html?xtmc=poutine&xtcr=1%20 - L'UE divisée par d'éventuelles sanctions contre les dirigeants ukrainiens.
10. http://www.lemonde.fr/europe/article/2014/02/23/l-ukraine-cette-incomprise_4371929_3214.html - L'Ukraine, cette incomprise.
11. http://www.pravda.ru/news/world/europe/european/21-05-2015/1260736-sammit-0/ - Мировые СМИ: Европа провалила “Восточное партнерство”.
12. http://rus.delfi.lv/news/daily/latvia/dengi-probki-evropejskie-cennosti-chego-zhdat-ot-sammita-vostochnogo-partnerstva-v-rige.d?id=45990073 – Деньги, пробки, «европейские ценности”. Чего ждать от саммита “Восточного партнерства” в Риге.
13. http://tiras.ru/evrazija/6931-na-kavkaz...-cherez-brjussel.html - На Кавказ... через Брюссель
14. http://www.svaboda.org/content/transcript/24550237.html - «Мядовы месяц» перайшоў у “няроўны шлюб”.
15. http://www.spiegel.de/international/europe/war-in-ukraine-a-result-of-misunderstandings-between-europe-and-russia-a-1004706.html - Summit of Failure: How the EU lost Russia over Ukraine.
16. http://www.the-american-interest.com/2014/12/01/bottoming-out-in-europe/ - Bottoming Out in Europe.
17. http://europa.eu/rapid/press-release_MEMO-09-217_en.htm?locale=en – Eastern Partnership.
18. http://www.ng.ru/politics/2009-04-30/3_kartblansh.html - СНГ под натиском “Восточного партнерства”.

ИНФОРМАЦИОННОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ЕВРОПЕЙСКОЙ И ЕВРАЗИЙСКОЙ ГЛОБАЛЬНЫХ ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЕКТОВ

Д.В. Саргсян

АННОТАЦИЯ

На современном этапе актуальна активизация европейской и евразийской региональных интеграционных процессов. В статье рассматривается информационная составляющая политической интеграции восточноевропейских и южнокавказских постсоветских республик. В 2010–2015 гг. поиски Арменией своей геополитической ориентации наглядно демонстрируют все нюансы информационного противоборства между силовыми центрами.

Ключевые слова: «Восточное партнерство», Европейский Союз, Евразийский Союз, Соглашение об Ассоциации, европейская интеграция.

INFORMATIONAL ASPECT OF EUROPEAN AND EURASIAN GLOBAL INTEGRATION PROJECTS

D. Sargsyan

SUMMARY

European and Eurasian regional integration processes have been activated nowadays. The article discusses informational aspects of the political integration of the post-Soviet states in the Eastern Europe and South Caucasus. Armenia’s attempts to choose between geopolitical powers of the world during 2010-2015 reflect all the shades of informational confrontation between Russia and the West.

Keywords: “Eastern Partnership”, European Union, Eurasian Union, Association Agreement, European integration.

ЛИНГВИСТИКА

-ING ՄԱՍՆԻԿԸ ԿՐՈՂ ԿԱՐԳԵՐԻ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ ԲԱՌԱՅԻՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Ք. Գրիգորյան, Ս. Թումանյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է հայերենի մեքենական թարգմանության որակի բարելավման և խմբագրման հնարավոր միջոցների ուսումնասիրությանը՝–ing մասնիկը կրող բառաձևերի օրինակի հիման վրա: Այսպիսի կարգերի մեքենական թարգմանությունը ուղեկցվում է մի շարք անճշտություններով ու սխալներով: Թարգմանության բարդությունները բացատրվում են այս ձևերի երկակի վալենտությամբ, տարբեր շարահյուսական գործառույթներում գործածվելով, անգլերենում որոշ համանունների առկայությամբ և վերջապես հայերենում համապատասխան քերականական կարգի բացակայությամբ: Հոդվածում քննարկվում են թարգմանության բառային-ձևաբանական մակարդակում հանդիպող անճշտություններն ու սխալները և դրանք ուղղելու հնարավոր միջոցները: Հոդվածի նպատակը նշված կառույցների թարգմանությանն աջակցելն է և ալգորիթմների ու խմբագրական աշխատանքների հետ կապված հնարավոր փոփոխությունների ներմուծումը:

Հիմնաբառեր՝ *-ing*-ով ձևերի մեքենական թարգմանություն, *-ing*-ով ձևերի քերականական կարգի սահմանում, *-ing*-ով բառաձևերի միջև շարահյուսական և իմաստաբանական կապի սահմանում, բառագիտական սխալներ:

Սույն հոդվածում կներկայացնենք *-ing*-ով ձևերի մեքենական թարգմանության անճշտություններն ու սխալները և դրանք ուղղելու հնարավոր միջոցները, ինչպես նաև կդիտարկենք *-ing* կրող կարգերի փոխարկման առանձնահարկությունները բառային և ձևաբանական մակարդակում: Աշխատանքում *-ing*-ով ձևերի մեքենական թարգմանության անճշտություններն ու սխալները դիտարկելիս հաշվի են առնվում նաև մեքենական թարգմանության տեքստի հետ կապված աշխատանքներն ու խմբագրումը: Որոշ դեպքերում հնարավոր է կատարել խմբագրում առանց բնօրինակ տեքստին վերադառնալու, իսկ որոշ դեպքերում էլ պարզապես անհրաժեշտություն է առաջանում նորից կատարել մեքենական վերլուծություն և թարգմանություն (Hine 2002: 15-17; Helbich 2006: 3-6): Այժմ հասկանանք անճշտությունների և սխալների տարբերությունը:

Անճշտությունները կապված են թարգմանվող նախադասության ոճական սխալների հետ: Դրանք չեն խոչընդոտում տեքստի ընկալմանը. ավելին՝ *-ing*-ով բառաձևի կարգը և նրա կապը հարակից բառաձևերի հետ կարող է ճիշտ սահմանվել, սակայն այդպիսի անճշտությունները խմբագրման կարիք ունեն: Խմբագրումը կարելի է իրականացնել արագ՝ առանց բնօրինակ տեքստին անդրադառնալու:

Սխալները խոչընդոտում են տեքստի ընկալմանը, և դրանց խմբագրման համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում ևս մեկ անգամ վերլուծել բնօրինակ տեքստը:

Ախտորոշվող սխալների շարքին են պատկանում.

1. Սխալներ կապված *-ing-* ով ձևերի քերականական կարգի ոչ ճիշտ սահմանման հետ, որն էլ հանգեցնում է սխալ թարգմանության:

2. Նախադասության *-ing-* ով բառաձևերի միջև շարահյուսական և իմաստաբանական կապի սխալ սահմանումից առաջացած սխալներ (նույնիսկ քերականական կարգի ճիշտ սահմանման դեպքում):

3. Բառագիտական սխալներ՝ կապված *-ing*-ով բառաձևերի իմաստի սխալ ընտրության և համակարգի համար անծանոթ *-ing-* ով ձևերի հետ:

Սխալների և անճշտությունների ուսումնասիրությունը իրականացվել է *-ing*-ով բառաձևերի մեքենական վերլուծության ու թարգմանության մոդելների ընտրության հիման վրա: Ընդ որում, թարգմանության մոդել ասելով հասկանում ենք որոշակի, միմյանց հետ փոխկապակցված միավորների՝ բնօրինակ լեզվից մյուս լեզվի թարգմանության ամենահաճախ հանդիպող ձևը, իսկ մեքենական վերլուծության (անալիզ) մոդել ասելով հասկանում ենք խմբի տարրերի կարգի մեքենական որոշման սխեմա (բայի ձևեր, խոսքի մասեր և այլն) և նրանց կապերը:

Թարգմանության ավտոմատացման ուղղությամբ կատարված փորձերը ցույց են տվել, որ ամեն մի տեքստի, նախադասության մեջ կարելի է բացահայտել մի քանի ձևային կառույց, որոնք պայմանականորեն կարելի է դասդասել չորս մակարդակի: Քանի որ սխալները հնարավոր են տեքստի ցանկացած մակարդակում, քննարկենք փոխարկման (преобразования трансфера) սխալներն ու մոդելները մեքենական թարգմանության յուրաքանչյուր մակարդակում առանձին-առանձին՝

– բառային-ձևաբանական մակարդակ,
– շարահյուսական (խմբային) մակարդակ,
– իմաստաբանական (գործառական սեգմենտների) մակարդակ,
– նախադասության կամ համատեքստի մակարդակ:

Հարկ է նշել, որ բոլոր մակարդակները խիստ փոխկապակցված են միմյանց հետ, և որոշ սխալներ չեն կարող միանշանակ պատկանել մեկ մակադակի:

Բառային-ձևաբանական մակարդակի սխալներին են պատկանում թարգմանության բացակայությունը՝ համակարգի համար անծանոթ բառերի

առկայության դեպքում, և սխալներ, որոնք առաջանում են

– տարբեր գործածության հաճախականություն ունեցող համանուն բառաձևերի թարգմանության ժամանակ,

– տերմինաբանական կայուն համակցությունների և կառույցների թարգմանության ժամանակ,

– ածանցավոր բառերի թարգմանության ժամանակ,

– տվյալ առարկայական ոլորտին հատուկ բառերի թարգմանության ժամանակ:

Վերանայենք նշված սխալների տեսակները:

ա) Թարգմանության բացակայություն անծանոթ բառերի առկայության դեպքում:

Թարգմանված տեքստում չթարգմանված բառերի առկայությունը կապված է ավտոմատ բառարանում դրանց բացակայության կամ դրանց մասին տեղեկատվության թերությունների ու անճշտությունների հետ:

Աղյուսակ 1

№	Բնօրինակ նախադասություն	Մեքենական թանգմանություն
1	2	3
1	There could be the possibility of finding the common ground in these situations (e.g., by promoting the existence value of protected areas or by ***untangling*** and demonstrating the links between biodiversity and ecosystem services in production landscapes), which could change these into win-win cases. ***Unravelling*** cases is not, as some commentators have suggested, a formalistic process.	Կարող է լինել հնարավորություն գտնելու ընդհանուր եզրեր այդ իրավիճակներում (օրինակ՝ խթանելով գոյությունը արժեքը պահպանվող տարածքների կամ ***untangling*** և ցուցադրելով կենսաբազմազանության և էկոհամակարգի ծառայությունների միջև կապերը արտադրական լանդշաֆտներում), որը … (google.translate) ***Unravelling*** արկղերը չեն, քանի որ որոշ մեկնաբաններն առաջարկել են, formalistic մշակում է: (ISMA)
2	The knowledge of the kinds and groupings of organisms is of fundamental importance in the accurate interpretation of the biotic patterns evolving in the Cape Cod marine ecosystem and in ***deciphering*** the levels of ecological integration of populations in the region. It also holds a key to ***deciphering*** ancient Irish writing.	Գիտելիքը օրգանիզմների տեսակի և խմբավորումների հիմնարար նշանակություն ճշգրիտ մեկնաբանության բիոտիկ նախշերով զարգացող է Կաբո Cod ծովային էկոհամակարգի և ***deciphering*** մակարդակները էկոլոգիական ինտեգրման բնակչության տարածաշրջանում. Այն նաև ունի բանալին ***deciphering*** հին իռլանդական գրավոր.ե (google.translate)

1	2	3
3	This positional uncertainty led to several numbered objects ***being rediscovered.*** (Marsden, Brian G, Mercury,1996)	Այս դիրքային անորոշությունը հանգեցրել է մի քանի համարակալված օբյեկտների են ***rediscovered***. (google. translate) Այս դիրքային անորոշությունը ***rediscovered*** տարավ դեպ մի քանի համարակալված օբյեկտների գոյ: (ISMA)

Ինչպես տեսնում ենք, աղյուսակի օրինակների մեծ մասում համակարգի համար անծանոթ *-ing*-ով կառույցները հիմնականում չեն ազդում նախադասության ընդհանուր վերլուծության կամ իմաստի վրա. դրանք պարզապես չեն թարգմանվում:

Առաջին և երկրորդ օրինակներում *-ing*-ով կառույցները անմիջապես հաջորդում են նախդիրի, իսկ երկրորդ օրինակում հաջորդող հոդը առանձնացնում է գերունդը նրան հաջորդող կախյալ անվանական խմբից: Հաշվի առնելով այդ տվյալները՝ համակարգը նախդիրը ընդունում է որպես գերունդի մաս և ճիշտ վերլուծում է կախյալ բառերի խումբը, սակայն չի ճանաչում գերունդը. բացի այդ, համակարգի համար անծանոթ է սոնախածանցով տարբերակը: Երրորդ օրինակի դժվարությունը կայանում է նրանում, որ այստեղ գործածվել է գերունդի կրավորական ձևը, որը նկարագրական թարգմանություն է պահանջում, և 2 համակարգերի համար էլ այն անծանոթ է: Սակայն առավել մեծ բարդություն է առաջացնում re- նախածանցը: Այսպիսի կառույցների թարգմանությունը միշտ խմբագրության կարիք ունի:

Համակարգի համար անծանոթ բառաձևերի քանակը նվազեցնելու համար անհրաժեշտ է մուտքագրել այդպիսի բառերը ավտոմատ բառարանում:

բ) Սխալներ տարբեր գործածության հաճախականություն ունեցող համանուն բառաձևերի թարգմանության ժամանակ:

Ing-ով ձևերի համանունների շարքում որոշ անդամներ կարող են միանշանակ առավել հաճախ գործածվել, քան նույն շարքին պատկանող այլ բառաձևեր: Օրինակ՝

– *referring* բառաձևը որպես I դերբայ, որը կարող է հանդես գալ նաև որպես գերունդ,

– *regarding* բառաձևը որպես նախդիր, որը կարող է հանդես գալ նաև որպես գերունդ և I դերբայ,

– *following* ածականը, որը նաև հանդես է գալիս որպես նախդիր, ենթակա, I դերբայ և գերունդ (Иванова 1981: 84):

Որպես կանոն, միայն ամենահաճախ գործածություն ունեցող կառույցներն են մուտքագրում ավտոմատ բառարանում, այդ պատճառով միևնույն համանունի մյուս կարգերը չեն ճանաչվում տեքստերի վերլուծության

ժամանակ, ինչը բերում է սխալ թարգմանության: Տեքստերից դուրս բերված այսպիսի համանունների օրինակները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

№	Բնօրինակ նախադասություն	Մեքենական թարգմանություն
1	***Referring*** to Table 1, attrition rates for the D condition	***Վկայակոչելով*** Աղյուսակ 1, attrition փոխարժեքների համար D վիճակում
2	Because of the limited scope of my analysis, I ***will be referring*** only to the international controversy regarding the defense of natural resources. (17)	Քանի որ սահմանափակ շրջանակից իմ վերլուծության, ես պիտի ***վկայակոչելով*** միայն միջազգային հակասություններ վերաբերյալ պաշտպանության բնական պաշարների: Google translate Սահմանափակ շրջանակի պատճառով իմ վերլուծությունից, ես միայն ուղարկելիս կլինեմ միջազգային բնական ռեսուրսների պաշտպանության ***վերաբերյալ*** վիճաբանությունը: ISMA
3	They adopted a different view ***by regarding*** the planets and the solar dynamo as two weakly coupled non-linear systems. (18)	Նրանք ընդունել է այլ տեսակետը, ըստ ***վերաբերյալ*** մոլորակները և արևային Դինամո որպես երկու թույլ զուգորդված ոչգծային համակարգերի:
4	In the second stage (during negotiation), group members collectively undertake problem evaluation ***by following*** a specific agenda. (19)	Երկրորդ փուլում (բանակցությունների ընթացքում) խմբի անդամները հավաքական պարտավորվում են խնդրի գնահատմանը ***հետևյալ*** կոնկրետ օրակարգ: ISMA
5	Often rules, values, behaviors, and patterns of scientific thinking are learned ***by following*** the examples of supervisors and mentors.(20)	Հաճախ գիտական մտածողության կանոնները, արժեքները, վարքագիծը և ձևերը սովորել են ***հետևելով*** ղեկավարների և դաստիարակների օրինակներին: Google translate

Referring դերբայը (օր՝ 1, 2) հիմնականում գործածվում է *referring to* համադրությամբ, որը նախադասության սկզբում ունի *ըստ* իմաստը: Այս կառույցը մուտքագրված է ՄԹ համակարգի ավտոմատ բառարան որպես բառարանային միավոր՝ *վկայակոչել*, *վերաբերյալ* իմաստով: Քանի որ գերունդը նույնպես գործածվում է to նախդիրի հետ՝ հետադաս դիրքում, այն ընդունվում է համակարգի կողմից և թարգմանվում վերը նշված իմաստով: Բացի այդ, ապառնի շարունակական ժամանակաձևում կիրառվող այս համադրությունը նույնպես չի ընկալվում համակարգի կողմից և թարգմանվում է որպես *վերաբերյալ* (օր՝ 2):

Թարգմանության որակը բարելավելու համար կարելի referring to կառույցը ՄԹ համակարգի ընդհանուր ավտոմատ բառարանից տեղափոխել մասնագիտացված բառարան (օրինակ՝ տվյալ համադրությունը *վերաբերյալ* իմաստով գործածվում է հիմնականում բիզնեսի և գործնական տեքստերում և այն կարելի է տեղափոխել բիզնեսի մասնագիտական բառարան): Այդ դեպքում խմբագրին մնում է ուշադրություն դարձնել *refer* բայի առավել հազվադեպ հանդիպող անդեմ ձևերի թարգմանության վրա (գերունդ, I դերբայ): Բացի այդ, *referring to* բառարանային միավորի համար ԱԲ-ում կարելի է հաշվի առնել հետևյալ տեղեկատվությունը. բացի գերունդից մնացած դեպքերում վերոնշյալ կառույցից առաջ նախդիր չի գործածվում: Հետևաբար նախդիրը համարվում է գերունդի արտահայտման միջոց:

Regarding նախդիրը *referring to* արտահայտության նման նույնպես գործնական թղթաբանության մեջ հաճախ գործածվում է *վերաբերյալ* իմաստով: Հենց այդ իմաստն է նշված մեքենական թարգմանության համակարգի ավտոմատ բառարանում: Աղյուսակի 3-րդ օրինակում *regarding*-ը ոչ թե նախդիր է, այլ՝ գերունդ, և այն պետք է թարգմանվի *հաշվի առնելով, նկատի ունենալով:* Սակայն, գերունդը չի ճանաչվում համակարգի կողմից:

Քանի որ նախդիրին չի կարող նախորդել նախդիր (բացառությամբ այն հազվադեպ դեպքերի, երբ նախդիրներից մեկը դարձվածային բայի մաս է կազմում), ուրեմն ինչպես *referring to* արտահայտության, այնպես էլ *regarding* բառաձևի ճանաչման ալգորիթմում հնարավոր է հետևյալ փոփոխությունը. Եթե բառաձևից առաջ նախդիր է գործածվում, ուրեմն այդ բառաձևը չի կարող լինել նախդիր:

Դիտարկենք հաճախ հանդիպող *following* բառաձևի սխալ թարգմանության դեպքեր: Այն վերլուծվում է ՄԹ համակարգի կողմից միայն որպես ածական, չնայած 5-րդ օրինակում այն գերունդ է: Այս բառաձևի դեպքում բարդ է փոփոխություններ անել քերականական վերլուծության մեջ: Ածականն ու գերունդը կարող են գործածվել միևնույն շարահյուսական կաղապարում. կարող են ունենալ նախդիր՝ նախադաս դիրքում և գոյական՝ հետադաս դիրքում, այդ պատճառով դժվար է առանձնացնել միմյանցից տարանջատող միավորներ: Սակայն, կարող ենք փոփոխություններ մտցնել ալգորիթմի մեջ, օրինակ՝ եթե կառույցից հետո գործածվում է the որոշյալ

հողը, համակարգը ընդունում է այն որպես գերունդ, իսկ անորոշ հողի դեպքում՝ածական: Այսպիսով, իմանալով հնարավոր սխալ թարգմանության մասին, այն կարելի է ուղղել խմբագրման ժամանակ:

Մեքենական թարգմանության ժամանակ բարդություն առաջացնող *-ng*-ով բառերի քանակը սահմանափակ է: Օրինակ՝ սխալներ կարող են առաջանալ depend (on), provide բայերի անդեմ ձևերի թարգմանության ժամանակ: Այսպիսի բառերի գործածման հաճախականությունը կախված է տեքստի թեմայից և առանձնահատկություններից:

գ) Կայուն համակցությունների և բաղադրյալ կառույցների թարգմանություն:

Կայուն բառակապակցությունների թարգմանության սխալները կարելի է դիտարկել ոչ միայն բառային մակարդակով, այլ ինչ-որ չափով նաև շարահյուսական խմբի մակարդակով: Եթե կայուն բառակապակցությունը մուտքագրվում է ավտոմատ բառարան՝ որպես բառարանային միավոր, ապա այն դիտվում է որպես մեկ ամբողջական միավոր, որը չի ենթարկվում հետագա քերականական վերլուծությանը. հակառակ դեպքում այն կարող է թարգմանվել որպես անվանական խումբ, ինչը կարող է հանգեցնել կամ ոճական սխալների, կամ սխալ թարգմանության: Ուսումնասիրված գիտատեխնիկական համատեքստերից առանձնացվում են որոշ կայուն բառակապակցություններ, որոնք ներառված չեն համակարգի բառարանում:

Առավել հաճախ հանդիպող և մեքենական թարգմանության համար բարդություն առաջացնող բառակապակցություններից է *starting model, starting system* (մեկնարկային, նախնական մոդել, համակարգ): Այն ներառված չէ բառարանում, քանի որ կա դրա ավելի տերմինաբանական համարժեքը՝ *initial model*: Օրինակներից շատերում այն սխալ է թարգմանվում, չնայած կան նաև օրինակներ, որոնց թարգմանությունը ստույգ չէ, բայց կարելի է գուշակել, թե որ համադրությունն է գործածված:

Աղյուսակ 3

№	Բնօրինակ նախադասություն	Մեքենական թարգմանություն
1	2	3
1	The windshield, lights, ***starting system***, and roof were optional equipments on the 19.13 Reo.(21)	Առջևի ապակին, լույսերը, ***սկսած համակարգը***, և տանիքը ընտրովի սարքավորումներ էին 19.13 Reo վրա: Google translate
2	***Starting model*** σ1 used in the inversion was set to vary with r only.(22)	***Սկսող մոդել*** σ1 օգտագործված է շրջում ստեղծվել է տարբերելու r միայն. ISMA

1	2	3
3	Windows creates a restore point before it performs an update. On ***starting System*** Restore see tip 24 for instructions. (23)	Windows ստեղծում է վերականգնման կետ, մինչեւ որ իրականացնում է թարմացում. On ***ելման համակարգի*** Վերականգնել տեսհուշում 24 հրահանգների. Google translate ***Համակարգը սկսվելու*** վրա վերանորոգում է խորհրդի քանչորսից օգտագործման կանոնների համար: ISMA
4	Example illustrating the effect of ***cooling schedule*** on the performance of simulated annealing. (24)	***Ժամատախտակ սառեցնելու*** էֆեկտը մոդելավորված շիկափափկացման ներկայացման վրա նկարազարդող օրինակը: ISMA
5	You can view and edit your current ***heating and cooling schedule*** directly on the Nest Learning Thermostat or from any of the Nest apps. (25)	Դու կարող ես դիտել և խմբագրել քո ***էլեկտրական հոսանքի ջերմարարությունից*** և ուղղակի Nest Learning Thermostat ծրագրում ես ***սառելով*** կամ Nest apps ցանկացածից: ISMA
6	Their eastward movements following the main shock suggest that they are located on the ***hanging-wall*** side of the fault during the postseis mic period.	Նրանց արևելյան շարժումները հետևյալ հիմնական հարվածի վկայում են, որ իրենք գտնվում են ***կախված պատի*** կողմի մեղքով ընթացքում postseismic ժամանակահատվածում. Google translate Նրանց գլխավոր հարվածին հաջորդող արևելահայաց տեղաշարժերը հուշում են, որ դրանք postseis mic ժամանակաշրջանի ընթացքում ***վերնակողի*** վրա սխալի կողմը տեղորոշված են: ISMA

1-ին և 2-րդ օրինակները սխալ են թարգմանվել համակարգի կողմից: *Starting model* բառակապակցությունը դիտվում է որպես երկու առանձին բաղադրիչներ և սխալմամբ թարգմանվել է 1-ին օրինակում որպես հարակատար դերբայ, իսկ 2-րդում՝ ենթակայական դերբայ:

3-րդ օրինակում *starting* գերունդը գործածվել է *on* նախդիրի հետ՝ ժամանակի պարագայի պաշտոնում: ՄԹ համակարգերից 1-ինը (google.translate) սխալ է թարգմանել՝ չճանաչելով բառակապակցությունը որպես գե-

րունդ: 2-րդ համակարգը ճիշտ է սահմանում խմբի ներսում բառերի միջև կախյալությունը, սակայն ունենք ոչ տերմինաբանական թարգմանություն:

Starting model բառակապակցությունը ուսումնասիրված տեքստային նմուշներում բավականին հաճախ է գործածվում, սակայն դրանից բացի երբեմն հանդիպում են նաև սխալ թարգմանություն ունեցող ոչ հաճախ գործածվող այլ բառակապակցություններ, ինչպիսիք են *depth imaging, cooling schedule* և այլն:

